


Վ. ՎԵՐԵՍԱՅԵՎ

14921

ԻՌԻՇԿԻՆԻ



ԿՅԱՆԲԸ



ՀԱՅՊԵՏՆՐԱՏ

1937

891.71.09

Վ-49

J. H. [unclear]

10/13/70
[unclear]

19 NOV 2010

ՀՅՈՒՆԻՍՏ
Գ-49

Վ. ՎԵՐԵՍՏՅԵՎ

ՊՈՒՇԿԻՆԻ ԿՅԱՆՔԸ

ԿԵՆՍՈՑԳՐՈՎԱՆ ԱԿՆՈՐԿ

Ռուս. բարձր.

Հ. Լ.

Հ Ա Ց Պ Ե Տ Հ Ր Ա Ց
ՅԵՐԵՎԱՆ 1 9 3 7

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանդր Սերգեյեվիչ Պուշկինը ծնվել է Մոսկվայում, 1799 թվին, հին տոմարով մայիսի 26-ին, նոր տոմարով հունիսի 6-ին: Նրա հայրը՝ Սերգեյ Լվովիչը կա, վաճառի եր մի հնամյա ազնվականական տոհմի, բայց տնտեսությունումը չեր զրազվում և իր քայքայված կարվածներից քիչ եր յեկամուտ ստանում: Սերգեյ Լվովիչը վարում եր լիակատար անգործ կյանք, սիրում եր աշխարհիկ բավականութունները: Շատ հեշտությունումը գրում եր թե ուսերին և թե ֆրանսերին վատանավորները: Հետաքրքրվում եր գրականությունումը, ուներ հարուստ գրադարան՝ բազկացած գերազանցապես ֆրանսերեն գրքերից, անձնապես ծանոթ եր այն ժամանակվա կարկառուն գրողներից շատերի՝ Կարամզևի, Դիմիտրիևի, Ժուկովսկու, Վլադիմսկու հետ: Պուշկինի մայրը, Նադեժդա Ոսիպովնան, «Պետրոս Մեծի խափշիկ» Իբրահիմ Հանիրալի թոռն եր: Հանիրալը հարեշական տիրական մի իշխանի վորդին եր, վորպես պատանդ բնկել եր Կոստանդնուպոլիս և այնտեղից բերվել Ռուսաստան: Կայսր Պետրոս առաջինը նրան կնքիլ եր, կրթություն ալել և իրեն մոտեցրել: Պուշկինի արտաքինի և բնավորություն մեջ նրա աֆրիկյան ծագումից շատ գծեր ելին պահպանվել: Պուշկինի ծնողներն իրենց լերեխաներով քիչ



5 1400-5

եյին զբաղվում, յերեխաները մեծանում եյին Ֆրանսիացի դաստիարակչուհիների ձեռքի տակ: Պուշկինը ծուլ ու անփուլթ եր սովորում, հատկապես չեր սիրում մաթեմատիկան: Բայց շատ վաղ կպավ ընթերցանությանը. թագուն մտնում եր հոր գրադարանը և ամբողջ ժամերով կարդում եր ույն ամենն, ինչ ձեռքն եր ընկնում: Դեռևս ութ տարեկան հասակում ըսկըսեց վոտանավորներ գրել Ֆրանսերեն լեզվով, վորք տնային լեզու յեր Պուշկինի ընտանիքում, ինչպես ընդհանրապես այն ժամանակվա ազնվականական ընտանիքներում, և Պուշկինը մանկական տարիքում ֆրանսերեն սովելի լավ եր խոսում, քան ռուսերեն: Նա ժիր, սքամիտ և չարաճճի տղա յեր: Ծնողները չեյին սիրում տղային, նա յերբեք նրանցից զգվանք և կարեկցություն չեր տեսնում:

1811 թվին Պուշկինին տվին Յարսկոյե Սելոյի լիցեյը — կառավարական նոր բացված ռուսմական հիմնարկ Յարսկոյե (այժմ Դետսկոյե) Սելոյում:

Մի տարուց ահա թե ինչպիսի պաշտոնական բնութագիր տվին Պուշկինին լիցեյի դասատուներն ու վերակացուները: «Ունի ավելի փայլուն, քան հիմնական ձիրքեր, ավելի կրակոտ ու նուրբ, քան խորը միտք... Ընդունակ ե միայն այնպիսի առարկաներից, վորոնք քիչ են լարումն պահանջում, զրա համար ել նրա հաջողութունները շատ փոքր են... Ծայր աստիճանի անաշխատասեր եր... Սրամտություն ունի, բայց դժբախտարար միայն դատարկախոսության համար... Թեթևամիտ ե:

Պուշկինն իր ամբողջ կյանքում այդպիսի աստվորություն եր գործում մակերեսային և նրան քիչ ճանաչող մարդկանց վրա: Իրականության մեջ նա

գեռևս լիցեյում խիստ շատ եր աշխատում, կարդում և մտածում: «Քաղաք» բանաստեղծության մեջ (1814 թ.) Պուշկինը թվում ե իր սիրած գրողներին: Մարքս ապշում ե 15 տարեկան այդ տղայի անսովոր կարգացածության վրա: Ահա նրա սիրած հեղինակները — Հոմերոս, Վիրգիլիոս, Հորացիոս, Տասոս, Մոլիեր, Ռոսին, Վոլթեր, Ռուսո, Պարնի, ռուսներից՝ Դերժավին, Ֆանվիզին, Կարամզին, Դիմիտրիե, Կրիլով:

Մի քանի ընկերներ Պուշկինին չեյին սիրում նրա սուր լեզվի համար: Բաց նա ուներ նաև շատ բարեկամներ, վորոնք շատ սիրում եյին նրան — Իվան Պուշկինը (ապագա դեկաբրիստ), բարոն Դելվիգը (ապագա բանաստեղծ), խանդավառ խելառ Վիլյա Կյուլխեյբեկերը: Լիցեյի վարչակազմի նկատմամբ Պուշկինն իրեն անկախ եր պահում և դեռևս առաջին կուրսում նախաձեռնողը հանդիսացավ այն հուզումների, վորոնց հետևանքով լիցեյից հեռացավ ժողովրդականություն չվայելող սեսուչ Մարտին Պիլեցկին:

Լիցեյում հրատարակվում եյին ձեռագիր հանգեսներ, սաներից շատերը բանաստեղծություններ եյին գրում: Վորպես բանաստեղծ՝ հատկապես առաջ յեկան յերկու հոգի — Իլիչևսկին և Պուշկինը: Տարեցատարի Պուշկինն ավելի մեծ չափով եր ճանաչվում, և ընկերները հարգանքով դիտում եյին նրա աճող տաղանդը: Պուշկինը լիցեյում խիստ շատ եր գրում: Դեռևս նրա առաջին փորձերի գնահատողները Պուշկինի մեջ զգացին դեռատի արծվին, վորը վստահարար թըռիչքի համար բացել եր իր ամուր թևերը:

1815 թ. հունվարի 8-ին լիցեյում կրտսեր բաժանմունքից ավագ բաժանմունքն անցնող սաների

հրապարակային քննութիւնը տեղի ունեցավ: Քննութիւններին՝ պատվավոր հյուրերի թիւում ներկա յեր տասնութերորդ դարի ամենատաղանդավոր ողջ ընտանաստեղծներից մեկը ծերունի Դերժավինը: Կանչեցին Պուշկինին: Դերժավինից չբերու քայլ հեռու կանգնած, նա սկսեց կարդալ իր «Հիշողութիւններ Յարսկոյե Սելոյի մասին» բանաստեղծութիւնը, վորը գրւած էր Դերժավինի հայրենասիրական ներբողների վոճով: Բանաստեղծութիւնն ընդհանուր խանդավառութիւն առաջացրեց: Դերժավինն արցունքն աչքերին նետվեց համբուրելու պատանուն: Շփոթված Պուշկինը փախավ, իսկ Դերժավինը բացականչեց.

— Ահա թե ով կփոխարինի Դերժավինին:

Պուշկինն ավելի ու ավելի սկսեց իր վրա հրավիրել այն ժամանակվա ամենակարկառուն գրողների ուշադրութիւնը: Նրա վրա հուշով եյին նայում Կաբաճովնը, Բատուշկովը, Ժուկովսկին, իշխան Վլադեմսկին: 1816 թ. գարնանը Կաբաճովնն այցելեց լիցեյը իշխան Վլադեմսկու և Պուշկինի հորջեղբայր՝ Բանաստեղծ Վասիլի Լվովիչի հետ: Նա կանչեց Պուշկինին և ասաց.

— Ճախրի՛ր արծվի պես, բայց թռիչքիդ մեջ կանգ մի առնիր:

Բարձր կուրսերում Պուշկինը ծանոթութիւն հաստատեց Յարսկոյե Սելոյում գտնվող հուսարական գնդի լեյքովարդիայի սպաների հետ: Այն ժամանակվա գվարդիական սպայութեան մեծ մասը կառավարութեան հանդեպ շատ ոպողիցիոն տրամագրութեամբ էր համակված: Լեյքուսարների միջոցով Պուշկինը ծանոթացավ այն ժամանակվա անլիզալ գրականութեանը:

Նրա վրա մեծ ազդեցութիւն ունեցավ սպաներից մեկը, հետագայում նշանավոր Պ. Յակ. Չաադայեւը, վորը հիանալի մտածող և բացառիկ կրթութեան տեր մարդ էր: Նա այն ժամանակ հեղափոխականորեն էր տրամագրված և մեծ դեր խաղաց Պուշկինի քաղաքական դաստիարակութեան գործում: Չաադայեւն ընդհանրապես ել մեծ ազդեցութիւն ունեցավ Պուշկինի կրթութեան և մտավոր զարգացման վրա: Մի ժամանակակիցի կարծիքով, նա այս տեսակետից Պուշկինին ավելի շատ բան տվեց, քան ամբողջ լիցեյը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Պուշկինը, վորպես նվազ առաջադեմ, լիցեյից բաց թողնվեց կոլեգիական քարտուղարի աստիճանով: (Առաջագինները բաց եյին թողնվում ավելի բարձր տիտղոսավոր խորհրդականի աստիճանով): Նա նշանակվեց իրրև աստիճանավոր Պետերբուրգում, արտաքին գործոց պետական կոլեգիայում, տարեկան յոթ հարյուր ուրբլի ոռճիկով: Այդ ժամանակներում չերիտասարդ ազնվականների ծառայութեանն անվանական էր միայն. նրանք վոչինչ չեյին անում, ծառայութեան վայրում գրեթե չեյին լերուում, այլ ծառայում եյին աստիճանների մեջ առաջ գնալու համար: Պուշկինը վորքան ասես ազատ ժամանակ ուներ:

Նրա ծնողները փոխադրվեցին Պետերբուրգ: Պուշկինն ապրում էր ծնողների մոտ Ֆոնտանկայում, Կալինկինի կամուրջի մոտ: Ազգակցական հարաբերութիւններ և ծանոթութիւններ շնորհիվ Պուշկինը

մտավ կիսաշխարհի լավագուցն շրջանները: Դա միջոցներ եր պահանջում, չնչին ոռճիկն անբավարար եր: Իսկ ծնողների գործերն, ինչպես միշտ, խանգարված ելին: Դրան միանում եր հոր մանր ժլատութունը:

Պուշկինը գլխովին նետվեց Պետերբուրգի յետուն կյանքի մեջ: Նա պարում եր պարահանդեսներում, սիրահարվում, խմում: Բայց խմում եր ավելի շատ աղամարդութուն անելու համար, վորպեսզի ուրիշներից հեռ չմնա կամ նրանց գերազանցի, Հենց այդ աղամարդութուն անելու պատճառով ել իրեն պահում եր գրգռիչ յեղանակով: Թատրոնում, որինակի համար, Ոնեգինի պես «աթոռների արանքով վտտեբերը կոխելով» եր անցնում, կամ կանգնում եր բազկաթոռների շարքերի միջև, նստածների հորիզոնը փափելով, իսկ յերբ խնդրում եյին այն կողմ քաշվել, կուպիտ եր պատասխանում: Ամեն մի դատարկ բանի համար մենամարտի լեր կանչում. բայց ընկերներին հաջողվում եր այդ մենամարտերի մեծ մասը կանխել: Իսկ դրան զուգընթաց լերեկոներ եր անցկացնում Պետերբուրգ տեղափոխված Չաադայեվի տանը և նրա հետ զրույցներ եր ունենում ամենալուրջ թեմաների շուրջը կամ հարամզինի տանը բոլորին զարմացնում եր իր մտքով և կարգացածությամբ:

Չարմանալի յի, թե յերբ եր կարողանում գրել: Իսկ գրում եր շատ: Իրար հետևից վերջացնում եր «Ռուսլան և Լյուդմիլլա»-ի գլուխները, գրում եր բազմաթիվ լիրիկական բանաստեղծութուններ: Ավագ գրողները հիացմունքով ելին հետևում նրա տաղանդի արագ աճմանը: Ժուկովսկին գրում եր իշխան Վլա-

զեմսկուն: «Սքանչելի տաղանդ: Ինչպիսի բանաստեղծութուններ: Նա ինձ տանջում ե իր ձիրքով, վորպես ուրվական»...

1820 թվի մարտին Պուշկինը վերջացրեց «Ռուսլան և Լյուդմիլլա»-ն: Պոեմի յերևալը մամուլում մեծ գրական իրադարձութուն լեղավ: Պոեմի թեթև, ճոխ չափածոն, պատկերների գեղարվեստականութունը, վառ ընթացողումները, պարզ, անսեթևեթ լեզուն, վորը չեր վախենում «ամենաժողովրդական» արտահայտութուններից,— այս ամենն ինչ վոր բուրովին անսովոր բան եր ուսական պոեզիայի մեջ:

Մինչ այդ՝ Պուշկինի գլխի վրա փոթորիկ եր կուտակվում: Ալեքսանդր առաջինի քաղաքականութունը գնալով ավելի ռեակցիոն եր դառնում: Ներքին կառավարման գլուխն եր կանգնած Արակչեևը, վորը յերազում եր Ռուսաստանը զորանոցի վերածելը Յերկիրն աղքատանում եր անվերջ պատերազմներից: Յերիտասարդ սպաները, վորոնք յեղել եյին արտասահմանյան արշավանքներին, հատկապես Ֆրանսիայում, ուր վոչ—շատ ժամանակ առաջ վորոտացել եր բուրժուական մեծ հեղափոխութունը,— առիթ եյին ունեցել տեսնելու ավելի ազատ արևմտա—յեվրոպական քաղաքական կարգերը: Այդ ամենը խիստ թշնամական վերաբերմունք առաջացրեց դեպի կառավարութունը: Լիբերալ ազնվականության մեջ ծագում առան գաղտնի ընկերութուններ, վորոնք նպատակ ունեյին սահմանափակել ինքնակալութունը: Պուշկինը հանդիսացավ այն նրբազգաց արձագանքը, վոր անդրադարձնում եր հասարակության ոպողիցիոն տրամադրութունը: Նա եպիգրամներով ծածկեց Ալեքսանդր-

ըին և նրա ոգնականներին: «Ներբող ազատութեան մասին» գործում նա դիմում էր ցարերին, վորոնք իրենց համարում էին տերեր «աստծու վողորմածութեամբ»:

Ո՛վ տերեր դաժան, ձեզ գահ և պսակ
Որոնքն և տախտակ և վո՛ն բնությունն.
Ժիր ժողովրդից բարձր և ձեր հասակ,
Բայց ձեզանից բարձր, վեհ ու իմաստուն՝
Հավիտենական որոնքն և արթուն:
(Թարգմ. Վեսպեր)

«Գլուղ» բանաստեղծութեան մեջ նա վառ գույներով նկարագրում էր ճորտ գյուղացիութեան դրուժությունը: Ի՞նչու Չաադայի վին, նա գրում էր.

Հավատա, ընկեր, կծագի՛ շուտով,
Այգն յերջանկութեան՝ դյուրիչ ու վարար
Քնից կարթնանա Ռուսաստանը ծով,
Ինքնակալութեան աճյունի վրա՝
Մեր անունները կգրի հերթով:
(Թարգմ. Վեսպեր)

Բանաստեղծութիւններն արտաբերված որինականերով արագորեն տարածվում էին ամբողջ Ռուսաստանում, չկար քիչ թե շատ մի գրագետ պրայտը չէր վորը գրանք անգիր չիմանար:

Յերբ վերջապես, կառավարութեանը հասան նրա ազատ բանաստեղծութիւնները, Պետերբուրգի զինվորական գեներալ — նահանգապետ կոմս Միլոտով:

Վիչը Պուշկինին իր մոտ պահանջեց: Նա լեկավ, Միլոտովի վիչը նրա ներկայութեամբ հրամայեց վոստիկանապատին գնալ և Պուշկինի բնակարանում խուզարկութիւն կատարել: Պուշկինը հասկացավ, թե բանն ինչո՞ւնն է և ասաց.

— Կոմս, Դուք իզուր եք այդ անում: Այնտեղ չեք գտնի ձեր փնտածը: Ավելի լավ է հրամայեցեք ինձ թուղթ ու գրիչ տան, յես հենց այստեղ ամեն ինչ կգրեմ:

Պուշկինը նստեց և գրեց իր բոլոր անլեզալ բանաստեղծութիւնները:

Գործը լուրջ բնույթ ստացավ: Ալեքսանդր կայսրը վորոշեց Պուշկինին Սիբիր աքսորել կամ քշել Սոլովկիի վանքը: Պուշկինի բազմաթիվ բարեկամներն իրար անցան: Կարամզինի և Ժուկովսկու հոգսերի շնորհիվ վորոշվեց Պուշկինին Սիբիրի կամ Սոլովկիի փոխարեն ուղարկել հարավ, Յեկատերինոսլավ (այժմ Դնեպրոպետրովսկ), Ռուսաստանի հարավամասի կոլոնիստների գլխավոր խնամակալ գեներալ Ինգոլի մոտ ծառայելու:

1820 թվի մայիսի 6-ին Պուշկինը մեկնեց Պետերբուրգից:

ՀԱՐԱՎՈՒՄ

Հեծելագործի գեներալ Նիկ. Նիկ. Ռայկովսկին, նապոլեոնյան պատերազմների եպոխայի ռուսական կարկառուն այդ զորավարը, Պետերբուրգից գնում էր կովկասյան ջրերը: Գեներալին ուղեկցում էին նրա իրկուկրտսեր ազնիկներն ու կրտսեր վորդին, լեյթ-

բին և նրա ոգնականներին: Եներքող ազատութիւն
մասին» գործում նա դիմում եր ցարբերին, վորոնք
իրենց համարում եյին տերեր «աստու վողորմածու-
թյամբ»:

Ո՛վ տերեր դաժան, ձեզ գահ և պսակ
Որենքն ե տա իս և վնչ բնություն.
Փիր ժողովրդից բարձր ե ձեր հասակ,
Բայց ձեզանից բարձր, վեհ ու իմաստուն՝
Հավիտենական որենքն ե արթուն:
(Թարգմ. Վեսպեր)

«Գլուղ» բանաստեղծութիւն մեջ նա վառ գույ-
ներով նկարագրում եր ճորտ գյուղացիութիւն զրու-
թյունը: Դիմելով Չառապիվին, նա գրում եր.

Հավատա, ընկեր, կծագի՛ շուտով,
Այգն յերջանկության՝ դյուլթիչ ու վարաբ
Քնից կարթնանա Ռուսաստանը ծով,
Ինքնակալութիւն անճունի վրա՝
Մեր անունները կգրի հերթով:
(Թարգմ. Վեսպեր)

Բանաստեղծութիւններն արտագրված որինակ-
ներով արագորեն տարածվում եյին ամբողջ Ռուսաս-
տանում, չկար քիչ թե շատ մի գրագետ պրապորշիկ,
վորը դրանք անգիր չիմանար:

Յերբ վերջապես, կառավարութիւնը հասան նրա
ազատ բանաստեղծութիւնները, Պետերբուրգի զին-
վորական գեներալ — նահանգապետ կոմս Միլոտադո-

վիչը Պուշկինին իր մոտ պահանջեց: Նա լեկավ, Մի-
լոտադովիչը նրա ներկայութեամբ հրամայեց վոստի-
կանապատին գնալ և Պուշկինի բնակարանում խու-
զարկութուն կատարել: Պուշկինը հասկացավ, թե
բանն ինչո՞ւմն ե և ասաց.

— Կոմս. Դուք իցուր եք այդ անում: Անտեղ
չեք գտնի ձեր փնտոածը: Ավելի լավ ե հրամայեցեք
ինձ թուղթ ու գրիչ տան, յես հենց այստեղ ամեն
ինչ կգրեմ:

Պուշկինը նստեց և գրեց իր բոլոր անլեզալ բա-
նաստեղծութիւնները:

Գործը լուրջ բնույթ ստացավ: Ալեքսանդր կայս-
րը վորոշեց Պուշկինին Սիբիր աքսորել կամ քշել Սո-
լովկիի վանքը: Պուշկինի բազմաթիվ բարեկամներն
իրար անցան: Կարամզինի և Ժուկովսկու հոգսերի շնոր-
հիվ վորոշվեց Պուշկինին Սիբիրի կամ Սոլովկիի փո-
խարեն ուղարկել հարավ, Յեկատերինոսլավ (այժմ
Դնեպրոպետրովսկ), Ռուսաստանի հարավամասի կոլո-
նիստների գլխավոր խնամակալ գեներալ Ինզովի մոտ
ձառայելու:

1820 թվի մայիսի 6-ին Պուշկինը սեկնեց Պե-
տերբուրգից:

ՀԱՐԱՎՈՒՄ

Հեծելազորի գեներալ Նիկ. Նիկ. Ռայեվսկին, նա-
պոլեոնյան պատերազմների եպոխայի ռուսական կար-
կառուն այդ գորավարը, Պետերբուրգից գնում եր
կովկասյան ջրերը: Գեներալին ուղեկցում եյին նրա
չերկուկրասեր ազլիկներն ու կրտսեր վորդին, լեյթ-

հուտարական առումիստը Նիկոլայը: Պուշկինը ծանոթ էր Ռայեվսկիների ընտանիքի հետ Պետերբուրգում, իսկ Նիկոլայի հետ բարեկամացել էր դեռ Ցարսկոյե Սելոյում լիցեյիստ յեղած ժամանակ, յերբ այնտեղ էր գտնվում լեյբհուսարական գունդը: Ճանապարհորդները կանգ առան հանգստանալու Յեկատերինոսլավում: Նիկոլայը գիտեր, վոր Պուշկինն այդտեղ էր վտարված, և գնաց նրան փնտռելու: Նա նրան գտավ քաղաքի արվարձանի հրեյական մի խրդճուկ խրճիթում: Չսափրված, դժգույն և նիհար Պուշկինը մալարիտայի նոպալով բռնված պառկած էր տախտակյա նստարանի վրա: Այդ պայմաններում Ռաևսկու վրա նա շճեցուցիչ սպավորություն գործեց: Ուրախությունից Պուշկինի աչքերը թրջվեցին:

Ինզովի թույլութեամբ գեներալ Ռայեվսկին Պուշկինին իր հետ կովկաս տարավ: Ամռանը Պուշկինը Ռաևսկու հետ ապրեց ջրերում, վաննաներ ընդունեց, իսկ ոգոստոսի սկզբին՝ Ռայեվսկիների հրավերով, նրանց հետ Ղրիմ գնաց և յերեք շաբաթ Ռաևսկիների հետ անցկացրեց Գուրգուֆում, — յերեք յերանելի շաբաթ, վորոնք մնացին Պուշկինի հիշողության մեջ նրա կյանքի ամբողջ ընթացքում:

Սեպտեմբերի սկզբին Պուշկինը գեներալ Ռաևսկու հետ սեկնեց Գուրգուֆից: Այդ ժամանակամիջոցում գեներալ Ինզովի գրասենյակը Յեկատերինոսլավից փոխադրվել էր Կիշինեվ (Բեսարաբիա), և Պուշկինն այնտեղ ուղևորվեց: Ճանապարհին նա նորից տենդով հիվանդացավ. կատարելապես հիվանդ՝ նա գնաց Բախչիսարայ, դիտեց խանական պալատն իր

նշանավոր «արցունքի շատրվան»-ով և սեպտեմբերի 21-ին հասավ Կիշինեվ:

Կիշինեվում գտնվում էր Հարավային բանակի գլխիղիաներից մեկի շտաբը: Դիվիզիայի հրամանատարն էր գեներալ Միխ-Ֆյոդ. Ուլովը, վորը գաղտնի «Բարորության միության» անդամ էր: Նա իր գնդերում մտցրել էր կրթական, այսպես կոչված լանկաուսերյան դպրոցներ գիւղորների համար, յեռանդով պայքարում էր մարմնական պատիժների դեմ: Պուշկինի գալուց հետո նա շուտով ամուսնացավ գեներալ Ռայեվսկու մեծ աղջկա՝ Յեկատերինա Նիկոլայեվնայի հետ, վորը, Պուշկինի կարծիքով, «արտասովոր կին էր»: Պուշկինն Ուլովների մոտ ընդունվում էր վորպես տան մարդ: Այնտեղ նա ծանոթացավ Ուլովի դիվիզիայի սպաների հետ: Նրանց մեջ քիչ չէին խելացի և տաղանդավոր մարդիկ:

«Բարորության միությունը» յերկու բաժին ուներ: Մեկի կենտրոնը գտնվում էր Պետերբուրգում, մյուսի կենտրոնը հարավում, Տուլչինոյում, ուր գտնվում էր Հարավային բանակի գլխավոր շտաբը: Պետերբուրգիցիները ցանկանում էին սահմանադրություն՝ ազնվականական իրավունքների և կալվածատիրական հողատիրության պահպանումով: Ավելի ուղիվալ հարավայինները վորպես նպատակ էին առաջադրել գեմոկրատական հանրապետությունը՝ ազնվականական առանձնաշնորհումների լիակատար վերացումով և քաղաքական իրավունքներում բոլոր քաղաքացիների հավասարեցումով:

Հարավայինները գլուխն էր կանգնած գնդապետ Պետելը: Պուշկինը նրա հետ հանդիպում ունեցավ

Կիշինեվում, յերբ Պետեիլը կարճ ժամանակո՞ր
այնտեղ եր յեկել: 1821 թվի ապրիլի 9-ին Պուշ-
կինը գրում եր իր որպարում. «Առավոտն անցկաց-
քի Պետեիլի հետ... նա մեկն ե իմ ճանաչած ամենից
որիգինալ մտքերից»:

Կիշինեվից Պուշկինը մի քանի անգամ հյուր
գնաց Կիևի նահանգ, Կամենկա գյուղը, գնեբրալ Ռա-
եսկու մորը պատկանող մի հարուստ կալվածքը: Կա-
մենկայում ապրում եր Ռաեսկու մոր վորդին յերկ-
րորդ ամուսնությունից, Վասիլի Լվովիչ Իավիդովը,
վոր Հարավային ընկերության ամենագործոն ան-
դամներից մեկն եր: Ամեն տարի նոյեմբերի վերջում,
նրա մոր անվանակոչությունը տոնելու պատրվակով
Կամենկա խորհրդակցության եչին գալիս գաղտնի ըն-
կերության անդամները: Այդպիսի համագումարներից
մեկին պատահաբար ներկա յեղավ Պուշկինը և վերա-
նորոգեց ծանոթությունը Ի. Գ. Յակուշկինի հետ, վո-
րին նա արգեն հանդիպել եր Պետերբուրգում: Յա-
կուշկինը նույնպես ընկերության ամենագործոն ան-
դամն եր:

Հեղափոխության այն ժամանակվա այդ բոլոր
կարկառուն գործիչների հետ հաղորդակից լինելը մեծ
ազդեցութուն ունեցավ Պուշկինի քաղաքական դար-
գացման վրա: Նրա ուղղիցիոն տրամադրություններն
ամրացան: Իրան նպաստեցին նաև Յեվրոպայում տեւ-
ղի ունեցած դեպքերը: Հեղափոխություն եր բռնկվե-
րսպանիայում, Նեապոլում. Հունաստանն ապստամ-
բել եր թյուրքիայի դեմ: Պուշկինը խանդավառ հետե-
վում եր հունական ապստամբության ընթացքին, ին-
քը յերազում եր մասնակցել նրան:

Ընդհանրապես յերբեք Պուշկինն այնքան հեղա-
փոխականորեն տրամադրված չեր յեղել, վորքան այդ
ժամանակ. նա գրում եր.

Դո՛ւք, մրրիկներ ու քամի, ալեկոծե՛ք ջրերը.
Նորտակեցե՛ք ամրոցն այժմ՝ կորստարե՛ր ու
դաժան,
Մը՛ր ես, ահե՛ղ փոթորիկ, ազատության դու
նշան,
Այս անազատ ջրերից՝ վե՛ր սլացիր անվեհեր:
(Թարգմ. Վեսպեր)

Կիշինեվում յեղած ժամանակամիջոցում Պուշկինը
գրեց «Դաշույն» հեղափոխական բանաստեղծությունը:
Այն ժամանակ գրեց նաև կծու եպիգրամն Ալեք-
սանդր առաջինի հասցեչին—«Թմրկահարության տակ
դաստիարակված»: Պուշկինը նախագծում եր մի դրա-
մա, ուր ազնվականը թղթախաղում տարվում ե իր
հին, հավատարիմ ծառային. սկսում ե պոեմը Մեծ
Նովգորոզի ազատության համար կոփող առասպելական
մարտիկ Վադիմի մասին: Իր քաղաքական տրամադ-
րությունների անձնական արտահայտության խընդ-
րում Պուշկինը, ինչպես Պետերբուրգում, վոյ մի զգու-
շության չեր դիմում: Գաղտնի գործակալները հե-
տևյալը հաղորդեցին Պետերբուրգ. «Պուշկինը հրապա-
րակով և նույնիսկ սրճարաններում հայհոյում ե վոչ
միայն զինվորական իշխանությանը, այլ նույնիսկ
կառավարությանը»:

Իր հայացքներով և տրամադրություններով սեր-
տորեն հարելով գաղտնի ընկերությանը, Պուշկինը,

ասկայն, նրան անգամ չեր: Վոչ մեկը հեղափոխական շարժման պատմութեան մեջ մտած դավադիրներինց, ինչպես դեկաբրիստները, Պուշկինին չեր հայտնում դադանիքը: մեկ կողմից, վախենում եյին, վոր նա կարող է վեճի տաք ժամանակ բերնից խոսք թոցնել: մյուս կողմից՝ նրան պահում եյին վորպես վիթխարի տաղանդի, և գտնում եյին, վոր նա իր գրչով բավականաչափ աշխատում է իրենց նպատակներէ համար:

Պետերբուրգի բարեկամները ջանասիրաբար հոգում եյին Պուշկինին Կիշինեվից ավելի կուլտուրական մի կենտրոն տեղափոխելու մասին: Հենց այդ ժամանակ Ուքեսայում գեներալ — նահանգապետ նշանակվեց յեվրոպական կրթութիւն ստացած մի մարդ: Մ. Ս. Վորոնցովը: Ալ. Իվ. Տուրգենևի ջանքերի շնորհիվ՝ արտաքին գործոց մինիստրը Պուշկինին Կիշինեվից փոխադրեց Ուքեսա, իսկ Վորոնցովը խոստացավ նրան վերջնել իր հովանավորութեան տակ և նրա տաղանդին տրամադրել ամենաբարենպաստ պայմաններ՝ զարգանալու համար:

Պուշկինն ուրախութեամբ թողեց Կիշինեվը և անցավ Ուքեսա: Կոմս Վորոնցովը Պուշկինին շատ գուրգուրանքով ընդունեց, հրապիրեց իր տունը, ծանոթացրեց իր գեղեցկուհի կնոջ՝ Յելիզավետա Կսավերյեվնայի հետ: Պուշկինի առջև բացվեցին աշխարհիկ հասարակութեան դռները, վորը նա միշտ սիրել է:

Պուշկինի նյութական դրութիւնը չափազանց աննախանձելի յեր: Նա հաշվում էր վորպես կոմս Վորոնցովի գրասենյակի աշխատակից և ստանում էր ամսական 58 ռուբլի ու մի քանի կոպեկ ռոճիկ: Քա-

ԵՐ 0041 57

նի վոր Պուշկինն ամենեվին չգիտեր փող պահել և շուայլ կյանք էր վարում, ուստի այդ փողն, իհարկե, չեր բավարարում:

Իրենք՝ հանգամանքները Պուշկինին մղեցին դեպի այնպիսի մի ճանապարհ, վորը միանգամայն նոր ու ոտար էր այն ժամանակյա ազնվական գեղղի համար: Ազնվականական միջավայրում, վորին պատկանում էր Պուշկինը, ամոթալի յեր համարվում փող վերցնել գրական յերկերի համար: Այդ նշանակում էր «վաճառքի հանել ներշնչումը»: Պուշկինը վրձնականորեն դեմ գնաց այդ աղաչական նախապաշարմունքին. «Ներշնչումը չի ծախվում, բայց կարելի յէ ձեռագիրը ծախել» — սա նրա նշանավոր ասացվածքն է:

Պուշկինը հարավում շատ-շատ էր գրում: Նա այդ ժամանակ, ինչպես ինքն է խոստովանում, «խելքը թոցնում էր Բալրընի համար»: «Կովկասյան գերին», «Բախչիսարայի շատրվանը», «Ավագակ յեղբայրներ» պոեմները, վորոնք գրվել են Բայընի աղբիցութեան տակ, գծում են հզոր կրքերի և խոր ապրումների տեր մուայլ, հիասթափված հերոսներին: Բայընով հափշտակվելն այն ժամանակ ընդհանուր բան էր: Պուշկինի պոեմները, վորոնք գրված եյին հոյակապ չափածոով, լիցուն եյին վառ գեղարվեստական պատկերներով, անագին հաջողութիւն ունեցան. հասարակութիւնն անգիր էր սովորում պոեմները: Պուշկինի ժողովրդականութիւնն աճում էր տարեց-տարի: Ուքեսայում Պուշկինն սկսեց գրել իր ամենանշանակելի յերկերից մեկը — «Յեվկեների Ունեգին» պոեմը: Կիշինեվցի բարեկամները, այցելելով Պուշկինին

Ողեսայում, նկատեցին, վոր նա ամսե-ամիս ավելի
ու ավելի մոայլ և դյուրագրգիւ ե գտնուում: Նրա
հարաբերությունները կոմս Վորոնցովի հետ չեցին լա-
վանում: Կոմս Վորոնցովն այն ժամանակվա ոռուսա-
կան վարչարարների մեջ աչքի չեք ընկնում իր
կուլտուրականությամբ, լեռանդով և գործարարու-
թյամբ: Բայց նա ինտրիգան եր և չեսամուլ, սա-
ռը և ուխտագրոււթ, ամենամանր ինքնասիրության
տեր, սիրում եր շողոքորթությունն ու ստորաքար-
շությունը: Պուշկինը հասարակ ծառայող եր Վորոն-
ցովի գրասենյակում, այնինչ իրեն անկախ եր պա-
հում, պահանջում եր իր հետ վարվել վորպես հավա-
սար մարդու, չեր շողոքորթում Վորոնցովին, չեր հիա-
նում նրանով մյուս ծառայողների պես, վորոնք բո-
լորն ել ջոկովի ու հիանալի դաստիարակված, շքեղ
ու հարգալիբ յերիտասարդներ ե ին: Վորոնցովն սկը-
սեց գնալով ավելի ու ավելի սառը և մեծամտաբար
վերաբերվել Պուշկինի հետ:

1824 թվի մայիսին Վորոնցովը պաշտոնական
առաջարկ ուղարկեց Պուշկինին, վորպես իր գրասեն-
յակի ծառայողի, մեկնել գավառները և տեղեկություն-
ներ հավաքել այնտեղ չերևան յեկած մորեխի,
ինչպես և այն վոչնչացրելու ուղղությամբ ձեռք
առնված միջոցների մասին: Պուշկինը գազազեց:
Ստացած գործուղումն ասում եր, վոր Վորոնցովն
ուղում եր նրան դարձնել իսկական չինոֆիլի:
Պուշկինը վորոչեց հրաժարվել գործուղումից: Բա-
րեկամները նրան համոզեցին այդ բանը չա-
նել: Պուշկինը մեկնեց, իսկ վերադառնալով, ինչ-

պես պատմում եյին, այսպիսի մի զեկուցագիր ներ-
կայացրեց Վորոնցովին.

Մորեխը թուվ, թուվ,

Յեվ նստեց:

Չորս կողմը նայեց, ամեն ինչ կերավ

Յեվ նորից թուվ:

(Թարգմ. Վեսպեր)

Պուշկինն անմիջապես խնդրագիր ավեց իր հրա-
ժարականի մասին և վորոչեց ապրել գրական աշխա-
տանքով:

Աքսորականի կաշկանդված վիճակը, Վորոնցովի
հալածանքները, շնորհիվ գրաքննական ճնշումների ա-
զատ ստեղծագործելու անկարելիությունը, — այս բո-
լորը հետզհետե Պուշկինին ստիպեցին Ռուսաստանից
փախչելու վորոշմանը հանգել: Նա սկսեց նախապատ-
րաստվել նավով փախչելու դեպի Կոստանդնուպոլիս:
Քարեկամներից մի քանիսն ոգնում էին նրան: Բայց
փախուստն ինչ-ինչ պատճառներով գլուխ չեկավ:

Քանի վոր Պուշկինը համարվում եր արտաքին
գործոց մինիստրության սիստեմի ծառայող, ուս-
տի հրաժարականի վերաբերյալ խնդրագիրն ուղարկ-
վեց Պետերբուրգ: Այն ինչ Վորոնցովը քնած չեր: Մե-
կը մյուսի յետևից նա Պուշկինի մասին զեկուցագրեր
եր ուղարկում Պետերբուրգ: Նա աշխատում եր հավա-
տացնել կառավարությանը, վոր «Ողեսայի հասարա-
կությունը ծայր աստիճանի վտանգավոր ե Պուշկինի
համար, վոր նա կարող ե նրան վարակել մոլորու-
թյուններով և վտանգավոր մտքերով», վոր շատ ոգ-

տակար կլինի Պուշկինին հեռացնել նրա յերկրպագու-
ների շողոքորթութունից, վորոնք նրա գլուխը պլո-
տեցնում և յերիտասարդին ներշնչում են այն միտքը,
թե նա յերեկելի գրող է, «այնինչ նա սոսկ թույլ ըն-
գորինակող է գրող յորդ Բայրընի, վորի ոգտին շատ
քիչ բան կարելի յէ ասել»:

Պուշկինը հանգիստ սպասում էր պաշտոնաթո-
ղության: Իսկ ամպերն ավելի ու ավելի եյին խտա-
նում նրա գլխավերեւը: Մոսկւայի վոստիկանութուն-
նը բռնեց Պուշկինի մի նամակը՝ գրած իր բարեկա-
մին, ուր նա գրում էր աստծո գոյության և հոգու
անմահության ոգտին յեղած պատճառաբանություն-
ների անհամոզիչ լինելու մասին: Վորոնցովը Պետեր-
բուրգից մի գրութունն ստացավ, վորով հրահանգվում
էր Պուշկինին հեռացնել ծառայութունից՝ վատ վար-
քի համար և անհապաղ վտարել ծնողների կալվածքը,
Պսկովի նահանգը, տեղական իշխանության հսկողու-
թյան տակ: Պուշկինը շքեց, յերբ նրան հայտնեցին
ցարի վորոշումը: Յեւ բոլորին այդ վորոշումը զար-
մացրեց իր խստությամբ: 1824 թվի հուլիսի 31-ին
Ոգեստայի քաղաքապետը Պուշկինին ուղարկեց Պսկովի
նահանգը:

ՄԻՆԱՅԼՈՎՄԿՈՅԵՅՈՒՄ

Պուշկինն իշխանության հրամանով ուղեւորվեց
առանց վորեւ տղ կանգ առնելու և ոգոստոսի 9-ին
հասավ ծնողների կալվածքը, Միխայլովսկոյի գյուղը:

Գրեթե յերկու տարի նա անցկացրեց գյուղում
կատարյալ մենակության մեջ իր պառավ դայակ Ա-

լինա Ռոդիոնովնայի հետ: Առավոտյան վեր եր կենում
և սառը ջրի լողանք ընդունում, իսկ հետո նստում
էր գրելու: Ուշ էր ճաշում. ճաշից հետո ձիով շրջա-
գայում էր, յերեկոյան լանձրութունից ինքն իր հետ
բիլիարդ էր խաղում կամ թե յսում էր դաշակի հե-
քիաթները: «Ինչ սքանչելի բաներ են այս հեքիաթ-
ները, - հիացմունքով գրում էր Պուշկինն իր բարե-
կամներին:— Ամեն մեկը մի պոեմ է... Դայակս Տաս-
յանայի դայակի որդիներն են. նա յէ իմ միակ բա-
րեկամունքին, և միայն նրա հետ յես չեմ ձանձրա-
նում»:

Տոն որերին Պուշկինը յերբեմն ուսական կար-
միր շապիկ էր հագնում, թոկ էր կապում մեջքին և
ճանապարհվում էր հարևան Սվյատագորկի վանքը
տոնավաճառի, նստում էր կույր մուրացկանների մոտ,
լսում և գրի յիր առնում նրանց յերգերը Ղազարոսի,
աստծո սարգ Ալեքսեյի մասին:

Հարևան կալվածատերերի հետ Պուշկինը հարա-
բերութուն չունեւր, միայն հարևան Տրիգորսկոյի
գյուղի կալվածատիրուհի Պրասկովյա Ալեքսանդրովնա
Ռսկայովայի հետ էր ծանոթութուն պահում: Նա ար-
դեն իսկ վոչ — յերիտասարդ, բայց կրթված և խելոք
կին էր: Պուշկինը շատ էր սիրում նրան և մինչև իր
կյանքի վերջը բարեկամական հարաբերություններ
պահպանեց նրա հետ:

Պուշկինը հյուժվում էր կարոտից և ձանձրու-
թից: Նա միշտ սիրել է աղմուկը, շարժումը. մեծ
հասարակութունը, մտավոր լարված մթնոլորտը: Մի-
խայլովսկոյից նրա գրած նամակները լի յեն այս-
պիսի խոստովանություններով. «Միխայլովսկոյեն հեղ-

ձուցիչ և ինձ համար», «մեզանում անձրեք շատ և աղմկում, քամին աղմկում և, անտառն աղմկում է, աղմկալի յե, բայց ձանձրալի» և այլն: Նրա հոգին կատաղությամբ եր լցվել կառավարության հալածանքները գեմ, վորը մի տեղից մյուսն եր գցում նրան և հնարավորությունն չեր տալիս հանգիստ աշխատելու: Յեվ դարձյալ Պուշկինի առջև՝ վորպես դրությունից դուրս գալու միակ յեւք, սկսեց ուրվագծվել փոխուստը դեպի արտասահման: Սակայն իրագործել այն դարձյալ չհաջողվեց:

1825 թվի հունվարին Միխայլովսկոյե յեկավ Պուշկինին այցելելու նրա լիցեյական հին բարեկամ Իվան Իվանիչ Պուշչինը, նա յեկավ վաղ առավոտյան: Պուշկինը նրան տեսավ լուսամուտից և առանց հագնելու, գիշերային շապիկով, սառնամանիքի մեջ դուրս թռավ ընկերոջն ընդառաջ: Տեսակցությունը շատ ուրախ եր. Պուշչինը Պուշկինին նվեր եր բերել Գրիբոյեդովի «Մեղքից պատուհաս»-ը, վորն այն ժամանակ տարածվում եր ձեռագիր արտագրությամբ: Ճաշից հետո նստեցին կարդալու:

Նրանք խոսեցին նաև գաղտնի ընկերության մասին: Պուշչինը Հյուսիսային գաղտնի ընկերության յեռանդուն անդամ եր: Մինչև այժմ նա Պուշկինից թագցնում եր իր մասնակցությունն այդ ընկերությանը, իսկ այժմ տարտամ կերպով ակնարկեց, վոր անդամ է: Պուշկինը հուզված վեր թռավ աթոռից: Նա հիշեց Կիշինսկի իր բարեկամ մայր Ռասկոնն. արդեն հինգերորդ տարին եր, ինչ նրան պահում էյին Տիրասպոլի բերդում և վոչինչ չեյին կարողանում դուրս քաշել նրանից:

— Ծիշտ և, այս ամենը մայր Ռայիվսկու կա-

պակցությամբ, — բացականչեց Պուշկինը, հետո, հանգրտանալով, ավելացրեց, բայց և այնպես, յես քեզ սիրելի Պուշչին, չեմ ստիպի խոսել: Թերևս, դու իրավացի յես, վոր ինձ չես վստահում: Ծիշտ և, յես արժանի չեմ այդ վստահության իմ շատ հիմարությունները պատճառով:

Նստեցին մինչև ուշ գիշեր: Պուշչինի կողքը բերին: Ընկերները պինդ գրկախառնվեցին և բաժանվեցին — լնդմիշտ: Նույն 1825 թվի վերջում, դեկտեմբերի 14-ի ապստամբությունից հետո, Պուշչինը ձերբակալվեց և ուղարկվեց աքսոր՝ տաժանակիր աշխատանքի: Գյուղում անցկացրած մի օրինակ, ապավորությունն ըրով աղքատ կյանքի տարիները շատ բարենբարե պատ յեղան Պուշկինի ստեղծագործության հապաստ յեղան: Նա շատ եր գրում: Ինքն իր հանդիպ պահանջները մեծացան: «Զգում եմ, գրում եր Պուշկինը, — վոր իմ հոգևոր ուժերը հասել են լիակատար հասունության, յես կարող եմ ստեղծագործել»:

1824 թվի հոկտեմբերին Պուշկինը Միխայլովսկոյեյում վերջացրեց դեռևս հարավում սկսած «Գրնվսկոյեյում վերջացրեց դեռևս հարավում սկսած «Գրնվսկոյեյում չունենր» պոեմը: Նույն Միխայլովսկոյեյում Պուշկինը գրեց մի մեծ գործ, վորի վրա աշխատում եր յերկար ու սիրով. — «Բորիս Գոդունով» պատմական տրագեդիան: Թատրոնը յուր յեր գնում «ռուսական Ռասինների» գործերով — Ֆրանսիական կեղծկլասիկական նմուշների սեթևեթ ընդորինակումներով, վորոնք վոչ մի գեղարվեստական նշանակություն չունեյին: Պուշկինն իրեն նպատակ առաջադրեց թատրոնը շուտ տալ դեպի Շեքսպիրի հարթած ուղին: «Հաստատապես հավատացած լինելով, — գրում է նա, — վոր մեր թատրոնի հնացած ձևերը վերափոխում են պահանջում,

յես իմ տրագեդիան դասավորեցի մեր հոր՝ Շեքսպիրի սխտեմով... Յես նրան նմանեցրի բնավորությունների ազատ ու լայն պատկերումը, տիպերի արտասովոր կազմությունը և պարզությունը... Յես հաստատապես հավատացած եմ, վոր մեր թատրոնի համար պատշաճ են շեքսպիրյան դրամայի ժողովրդական որևէ քերական և վոչ թե Ռասինի տրագեդիաների արքունական սովորույթը: Դարի վոզին պահանջում ե մեծ փոփոխություններ նաև դրամատիկական բեմում»:

1825 թվի աշնանը Պուշկինն ավարտեց «Բորիս»-ը, ինքն իրեն բարձրաձայն կարգալով ծափ տըվեց և խանդավառ բացականչեց — «Այ դու Պուշկին, այ դու շան վորդի»:

Միխայլովսկոյեյում Պուշկինը շարունակեց գրել «Ռեբեկան»-ը, վոր սկսել եր Ուեստյոմա: Վերջացրեց չերբորդ գլ լիւր. գրեց չորբորդ և հինգերբորդ գլուխները: 1825 թվի դեկտեմբերի կեսերին յերկու առավոտ նստելով՝ գրեց «Կոմս Նուլին» պոեմը:

1 25 թվի նոյեմբերի 19-ին (հին տոմարով) անըստ պատելի կերպով մեռավ կաջար Ալեքսանդր առաջինը: Նրա գահաժառանգն եր համարվում իր յեղբայր Կոնստանդինը, բայց նա վաղուց արդեն հրաժարվել եր զահակալական իրավունքներից: Սակայն այդ բանը չգիտես ինչնու գտնու յեր պահվում: Կայսր պիտք ե դառնար ըստ կարգի հաջորդ յեղբայրը — Նիկոլայը: Չորքերը նախ բերվեցին յերդում տալու Կոնստանդինին, և Նիկոլայն ինքն ել չերդում տվեց նրան. հետո սկսեցին յերդման տանել Նիկոլային: Գաղտնի ընկերության անդամները վորոշեցին ոգտվել այդ

թյուրմացությունից և զինվորական հեղաշրջման ձեռնապարհով հասնել ինքնակալության սահմանափակմանը, կամ նույնիսկ տապալմանը: Նրանք զորքերին ներշնչեցին, թե Կոնստանդինը բռնի կերպով ե մեկուսացված, և դեկտեմբերի 14-ին նրանց դուրս բերին Սենատի հրապարակը Նիկոլայի դեմ: Ապըստամբությունը ճնշվեց Նիկոլայի թնդանոթնեղով:

Գահակալության փոփոխությունը մեծ հույսեր ծնեցրեց Պուշկինի հոգում: Նա վորոշեց միջնորդություն հարուցել իր ազատագրման մասին: Չեր կարելի ավելի բարենպաստ մոմենտ ընտրել միջնորդություն հարուցելու համար: Ճիշտ ե, ինքը Պուշկինը գաղտնի ընկերության անդամ չեր, բայց գրեթե բոլոր ձեռքակալվածների մոտ գտնում եցին նրա հեղափոխական բանաստեղծությունները: Բոլոր տվյալների հիման վրա կառավարության համար միանգամայն պարզ կերպով ուրվագծվեց Պուշկինի հսկայական ազիտացիոն դերն ապստամբության նախապատրաստման գործում:

Պուշկինի խնդրագրին պատասխան չտրվեց: Վերջացավ հետաքննությունը: Հինգ դեկտեմբերի կախաղան հանեցին, ավելի քան հարյուր հոգու աքսորեցին Միրբի, տաժանակիր աշխատանքի: Պուշկինը ծանոթ եր կախաղան հանվածների մեծ մասի հետ, ճանաչում եր աքսորվածներից շատերին: Նրանց նրկատմամբ տեսնված դատաստանը նրա վրա ցնցող տպավորություն թողեց: «Նախաղան հանվածները կախաղան են հանված, — գրում եր նա, — բայց հարյուր քսան բարեկամների, յեղբայրների, ընկերների տաժանակիր աշխատանքը սոսկալի յե»: Հետագայում

գեռ յերկար ժամանակ Պուշկինն իր սեփագրություններէ մեջ նկարագրում եր կախադանը հինգ դիակներով և մտախոհ մակագրում եր. «Յես ել կարող եյի, ինչպես այստեղ ե...»: «Յես ել կարող եյի...»:

1826 թվի սեպտեմբերի 3-ին Պուշկինն իր յերեկոն անցկացրեց Տրիգորսկում: Մքանչելի չեղանակ էր: Պուշկինը շատ զվարթ եր, զրոսնում եր որիորդների հետ. յերեկոյան ժամը 11-ին նրանք ուղեկցում եյին Պուշկինին դեպի Սիխայլովսկոյե տանող ճանապարհը: Իսկ լուսարացին՝ Տրիգորսկոյե վազ տվեց Պուշկինի պառավ դայակ Արինա Ռոդրոնովնան, զգզզված, վախեցած և հեկեկալով: Նա հաղորդեց, վոր գիշերը Սիխայլովսկոյե յեր չեկել ինչ-վոր սպա կամ զինվոր, վերցրել եր Պուշկինին և տարել իր հետ:

Մինչ այդ, Պուշկինը Ֆելդշեգերի հետ կառքով սլանում եր դեպի Մոսկվա: Գնում եյին գիշեր — ցերեկ: Սեպտեմբերի 8-ին տեղ հասան: Պուշկինին ժամանակ չտվին վոչ հանդատանալու, վոչ շորերը փոխելու և վոչ ել սափրվելու. ցրտից դողալով, ցեխով պատված՝ նրան տարան ուղղակի պալատ և մտցրին Նիկոլայի առանձնասենյակը:

Կայսրը Պուշկինին դիմավորեց շատ վողորմաժարար: Նրանց միջև յերկար խոսակցություն տեղի ունեցավ: Յարը հարցրեց.

— Պուշկին, կմասնակցեյի՞ր արդոք դեկտեմբերի 14-ին, յեթե Պետերբուրգում լինեյիր:

Պուշկինը համարձակ պատասխան տվեց.

— Անպայման, արքա: Իմ բոլոր բարեկամները դավադրության մեջ եյին և չես չեյի կարող չմասնակցել դրան: Միմիայն իմ բացակայությունը փրկեց ինձ:

Նիկոլայը հարցրեց, թե փոխվել է արդոք նրա մտածելակերպը և խոսք տալիս է այլ կերպ մը: Եթե ու գործել, յեթե նրան ազատություն արվի...
Հետո սառը հարցրեց.

— Այժմ ի՞նչ ես գրում:

— Գրեթե վոչինչ, գրաքննությունը շատ խիստ է:

— Իսկ ինչո՞ւ յես այնպիսի բան գրում, վոր գրաքննությունը չթուլատրի:

— Գրաքննությունն ամենաանմեղ բաներն ել թուլ չի տալիս:

— Ին լավ, ուրեմն յես կլինեմ քո գրաքննիչը: Ինձ ուղարկիր այն ամենը, ինչ կգրես:

Կայսրը՝ ձեռքից բռնած առանձնասենյակից դուրս տարավ հուզված Պուշկինին և ընդունարանում խըմբված պալատականներին ասաց.

— Պարոնայք, Ահա ձեզ նոր Պուշկինը: Հնի մասին մոռանանք:

Բաց դրանք լոկ խոսքեր եյին: Ամբողջ վարքը պարզ կերպով ցույց տվեց ցարին, վոր Պուշկինն ամենևին ել այդպիսի նոր մարդ չի դարձել:

Պարզ եր, վոր նրանից յերոք Դերժավին, Կարամզին կամ Ժուկովսկի դուրս չեր գա, վոր ցարը յերբեք չեր կարողանա հանգիստ սրտով վստահել նրան:

ՅԱՐԻ ՅԵՎ ԺԱՆԴԱՐՄՆԵՐԻ ԽՆՍՄԱԿՈՂՈՒԹՅԱՆ ՏՕԿ

Պուշկինն ազատություն ստացավ և մնաց Մոսկվայում ապրելու: Մոսկվան Պուշկինին խանդավառությամբ դիմավորեց: Յերը նա առաջին անգամ յերևաց թատրոնում, բոլոր շարքերով անցավ նրա ա-

նունը կրկնող շշուկը՝ բոլոր հայացքները, բոլոր հե-
ռագրտակներն ուղղվել էյին նրա վրա, վոչ վոք
դեպի բեմը չեր նայում: Հավաքույթներում և պարա-
հանդեսներում ընդհանուր ուշադրությունն ուղղվում
էր Պուշկինի վրա, կանայք շրջապատում էլին նրան,
անընդհատ նրան էյին ընտրում կոտիլոնի և մազուր-
կայի համար: Առավոտները Պուշկինի ընդունարանը
լեցուն էր լինում այցելուներով, նրան ճանաչում էր
ամբողջ քաղաքը, բոլորը նրանով հետաքրքրվում
էյին: Ամենաաչքի ընկնող մարդիկ պատիվ էյին
համարում ծանոթանալ նրա հետ:

Հետագա տարիները Պուշկինն ապրեց մերթ
Մոսկվայում, մերթ Պետերբուրգում: Նա հափշտակու-
թյամբ անձնատուր յեղավ մեծ քաղաքի բավականու-
թյուններին: Բայց և այնպես խիստ շատ աշխատում
էր: Իրար հետևից գրեց «Յեվգենի Ուրիզին»-ի գլուխ-
ները: 1828 թվի ցելսոտ աշնանը Պուշկինը չերկու-
յերեք շաբաթում գրեց ամբողջ «Պուլտալա»-ն: Նա
այն գրում էր իրոք վոր «և՛ հնչյուններով, և՛ խոսվու-
թյամբ լեցուն»: Գրում էր ամբողջ որերով, Բանաս-
տեղծությունները նույնիսկ նա տեսնում էր յիրագում,
այնպես վոր գիշերը վեր էր թռչում անկողնից և գրի
յեր առնում մթան մեջ: Այն մտերը, վորոնք չույն
կարողանում չափածոյի վերածվել, նա գրի յեր առ-
նում արձակով: Բայց հետո ինսամքով բոլորը հղկում
էր, ջնջում, նորից գրում, նորից ջնջում: Ընդհան-
րապես իր յերկերի վրա Պուշկինը խիստ շատ էր աշ-
խատում: Նրա սեւագրությունները ներկայացնում են
հաջորդաբար նորից և նորից ջնջված, իրար վրա ծեփ-
ված տողերի և բառերի համատարած մի ցանց:

Աքսորից վերադառնալուց հետո՝ Պուշկինը ցարի
և կառավարության նկատմամբ իրեն այնպես էր պա-
հում, վոր վոչ մի բանում չեր կարող կշտամբանքի
տեղի տալ:

Ինչպիսին էլ լիներ այդ ժամանակ Պուշկինի իս-
կական վերաբերմունքն ինքնակալության հանդեպ,
այնուամենայնիվ, նա վոչ մի բանով առիթ չեր տա-
լիս իրեն կասկածելու քաղաքական անբարեհուսու-
թյան մեջ: Մակայն Նիկոլայը շարունակում էր ամե-
նախոր անվտանգությամբ վերաբերվել նրան: Այն
«վորոքմածությունները», վորոնց առատորեն արժա-
նացնում էր Պուշկինին կայսրը, բանից դուրս է գա-
լիս՝ նրանից խլում էյին նույնիսկ այն իրավունք-
ները, վորոնցից ոգտյում էր ամեն մի քաղքեմի:

Պուշկինի և ցարի միջնորդն էր նորին մեծու-
թյան սեփական գրասենյակի նշանավոր «Յերրորդ բա-
ժանմունքի» պետ, ժանդարմական գեներալ Բենկեն-
դորֆը, վորը ցարի ամենամտտիկ մարդն էր: Մոսկ-
վայում բարեկամների շրջանում Պուշկինը կարգաց իր
«Բորիս Գոդունով»-ը: Բենկենդորֆից անմիջապես
ցուցում չեկավ, վոր առանց վաղորոք ցարին նայել
տալու՝ Պուշկինն իրավունք չունի վորեւե ճանապար-
հով «տարածել» իր յերկերը: Դուրս էր գալիս, վոր
Պուշկինը, ուրիշների համեմատությամբ իրր թե ա-
ռանձնաշնորհյալ վիճակում գրված լինելով հանդերձ,
չեր կարող նույնիսկ իր յերկերը կարգալ բարեկամ-
ներին՝ առանց նախնական թույլտվության:

Վորոշելով ձեռնարկել «Բորիս Գոդունով»-ի տը-
պադրությանը, Պուշկինն իր պիեսն ուղարկեց ցարին
գրաքննության համար: Շուտով նա Բենկենդորֆից

տեղեկութիւնն ստացալ, վոր կայսրը մեծ գոհունա-
կութեամբ կարդաց պիեսը և նրա վերաբերլալ զեկու-
ցագրի վրա բարեհաճեց գրել հետեյալը. «Յես գտնում
եմ, վոր պ. Պուշկինի նպատակը կատարված կլինե՞ր
յեթե նա հարկ յեղած մաքրազարդումով իր կոմեդի-
ան վերափոխի պատմական վիպակի կամ վեպի, Վալ-
տեր Սկոտի նմանողութեամբ»: Տգետ կայսրը բանաս-
տեղծին հանձնարարում եր արմատապես վերամշա-
կիլ հանճարեղ յերկը նրա ցուցումների համաձայն:
Այս ապուշ հանձնարարութեան ամբողջ կոմիդի՞ւմ մենք
կգնահատենք, յերբ հիշենք, վոր «Բորիս Գոգոլնուով»-ը
գրելիս՝ Պուշկինի գլխավոր նպատակն եր յեղել հենց
մեր թատրոնի խոր ուժգործը: Պուշկինը դառն հեզ-
նանքով պատասխանեց Բենկենդորֆին. «Համաձայն
եմ, վոր իմ դրամատիկական պոեմն ավելի շատ թեք-
վում ե զեպի պատմական վեպը, քան թե զեպի արա-
գեդիան, ինչպես վոր արքա կայսրը բարեհաճել է
նկատել: Յալում եմ, վոր ուժ չունեմ վերակառուցել
մի անգամ արդեն գրածս»: Ինքնակալի խորհուրդը
հրաման ե, — հարկ յեղալ պիեսի տպագրութիւնը
հետաձգել:

Այսպես սկսվեց ժանդարմի և նրա չարամիտ
հրամանատարի խնամակալութիւնը հանճարեղ բա-
նաստեղծի վրա, վորը տեեց մինչև նրա կյանքի վեր-
ջը: Խնամակալութեան տակ եր վոչ միայն նրա գրա-
կան գործունեւթիւնը, այլև նրա կյանքի յուրա-
քանչյուր քայլը:

Յերկու սպայի մոտ գտնվեցին գրաքննութեան
կողմից արգելված դրվագներ «Անդրե Շենյե» բանաս-
տեղծութիւնից՝ «Դեկտեմբերի 14-ին» վերնագրով:

Այդ գործով պատասխանատուութեան կանչվեց նաև
Պուշկինը, նրան մի շարք հարցաքննութիւններ
յենթարկեցին: Պուշկինին, վերջապես, հաջողվեց ա-
պացուցել, վոր այդ դրվագը վոչ մի առնչութիւն
չունի դեկտեմբերյան դեպքերի հետ և գրված է յեղել
դեկտեմբերի 14-ից շատ առաջ: Արդյունքը յեղալ
այն, վոր նրան ամենախիստ կերպով արգելվեց «հա-
սարակութեան մեջ թողնել» իր յերկերը՝ առանց գը-
րաքննութեան, իսկ նա ինքը դրվեց վոստիկանութեան
գաղտնի հսկողութեան տակ:

Դեռ այդ գործը չէր վերջացել, յերբ մի նոր,
ավելի լուրջ գործ հարուցվեց Պուշկինի դեմ: Կառա-
վարութեան ձեռքը հասալ դեռևս Կիշինևում Պուշկինի
գրած «Գալրիլիադա» հակակրօնական պոեմը, վորը
ծաղրում եր ավետարանական առասպելը Քրիստոսի
անարատ հղացման մասին: Այսպիսի սրբապղծութիւն-
նը կարող եր Պուշկինին սպառնալ հավիտենական
բանտարկութեան վանական ամենասուկալի բանտե-
րից մեկում: Բաղմաթիւ հարցաքննութիւնների ժա-
մանակ Պուշկինը համառօրեն ժխտում եր իր հեղի-
նակ լինելը, իսկ իր հոգու խորքում շատ անհանգիստ
եր: «Կանխազգացում» բանաստեղծութիւնից կարելի
է տեսնել, թե Պուշկինն այդ ժամանակ ինչքան եր
հոգնել անընդհատ հետապնդումներից:

Գլխիս վերև՝ կրկին ամպերն
Հավաքվեցին լուսութեան մեջ,
Ճակատագիրս նախաձգեռն՝
Սպառնում է կրկին, անվերջ —
Դժբախտութիւնն աղետաբեր...

Կայանայանեմ արհամարհանքս՝
Ճակատագրի արդյոք հանդեպ,
Յնվ կտանեմ նրա դեմ արդ
Տոկունությունը հազվադեպ՝
Ջահելությանն իմ այս հպարտ:

Այս մրրկոտ կյանքից հոգնած՝
Սպասում եմ յես փոթորկի...
(Թարգմ. Վեսպեր)

Վերջ ի վերջո, լիովին չպարզված պատճառներով,
այս գործը կարճվեց:

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳԵՊԻ ԿՈՎԵՍՍ

Քսանական թվականների վերջում մերձավորներն սկսեցին վորոշ փոփոխություն նկատել Պուշկինի բնավորության մեջ: Նա ավելի պակաս հաճուքով էր հասարակության մեջ լինում, սկսել էր իր անկյան, ընտանեկան կյանքի պահանջն զգալ:

1828 թվին Մոսկվայի պարահանդեսներից մեկում նա ծանոթացավ տասնվեցամյա մի աղջկա՝ Նատալիա Նիկոլայեվնա Գոնչարովայի հետ: Դա մոսկվացի դատարկամիտ որիորդ էր, վորի ամբողջ կրթությունն այն էր, վոր լավ խոսում էր Փրանսերեն և հիանալի պարում: Բայց նա զմայլելի գեղեցկության տեր էր: Պուշկինը սիրահարվեց նրան, ներկայացվեց նրա ծնողներին, սկսեց լինել Գոնչարովների տանը: Պատմում են, վոր այդ ժամանակ Նատալիա Նիկոլայենան Պուշկինից նույնիսկ վոչինչ չէր կարդացել:

Ընդհանրապես իր ամբողջ կյանքում խորապես անտարբեր է յեղել դեպի պոեզիան: Նրա հետ Պուշկինը վոչ մի հոգեկան առնչություն չէր կարող ունենալ: Նա դիտում էր նրան «Չերմեռանդորեն ծնրադրելով գեղեցկության սրբության առջև», այրվում էր սիրույց, բայց զգում էր, վոր աղջիկն անտարբեր է իր նկատմամբ, վոր ինքը վոչնչով չի կարող նրան հետաքրքրել և հրապուրել: Նրա հետ ամոթխած էր, յերկչոտ, ինչպես առաջին անգամ սիրահարված պատանին: Յնվ ընդհանրապես Գոնչարովների ընտանիքում նա սառնություն էր զգում և նեղվում: Մորը, Նատալիա Իվանովնային, Պուշկինը դուր չէր գալիս: Չնայած այդ ամենին, Պուշկինը 1829 թվի ապրիլի վերջում առաջարկություն արավ Նատալիա Նիկոլայեվնային: Նրան ուղղակի չմերժեցին, բայց պատասխանեցին, թե Նատալան ղեռ շատ ջահել է, թե պետք է սպասել...

Նույն գիշերը Պուշկինը մեկնեց Կովկաս, գործող բանակ:

Այդ ժամանակ Ռուսաստանի պատերազմն էր թյուրքիայի դեմ: Կովկասյան ճակատում գլխավոր հրամանատար Պասկևիչը ներխուժել էր թյուրքիայի սահմաններից ներս և հարձակվում էր Երզրումի ամրոցի վրա: Նրա բանակում ծառայում էր Նիժնի-Նովգորոդի զրագունների զնդի հրամանատար, Պուշկինի հին բարեկամ Նիկ. Նիկ. Ռահսկի — կրտսերը, իսկ Ռահսկու համհարյն էր Պուշկինի կրտսեր յեղբայր Լեվը: Մայիսի վերջում Պուշկինը գնաց Թիֆլիս, այնտեղ ապրեց յերկու շաբաթ և ճանապարհ ընկավ բանակին հասնելու: Հասավ, ներկայացավ Պաս-

կէկէչին և տեղավորվեց Ռեակտու վրանում:

Բանակային կյանքը շատ դուր յեկավ Պուշկինին:

«Թնդանոթը, — պատմում ե նա, — մեզ վեր եր կացնում արշալույսին: Բունը վրանում զարմանալի առողջ քուն ե: Ճաշին ասիական խորովածը ցողում եյինք Տավրիկյան ձյան մեջ սառցրած անգլիական փարեջրով և շամպայնով»:

Պուշկինը շրջափայտում եր կազակի ձի հեծած, մտրակը ձեռքին: Սև սյուրտուկ հագած և գլխին ցլիլինդը ծածկած ախարհիկ մարդը զինվորականների մեջ շատ անսովոր պատկեր եր ներկայացնում: Զինվորները Պուշկինին գերմանացի քահանա եյին համարում:

Բանակը հասավ Երզրում և 1829 թ. հունիսի 27-ին վերցրեց քաղաքն առանց վորեղ դիմադրության հանդիպելու: Այդ չխանգարեց Պասկևիչին քաղաքի առումը պատկերացնել վորպես մեծ հաղթանակ: Պուշկինն Երզրումում ապրեց ավելի քան յերեք շաբաթ: Քաղաքում ժանտախտ լերևան յեկավ: Նա վորոշեց մեկնել, Պասկևիչը պահում եր Պուշկինին, առաջարկելով հետագա ձեռնարկումների ականատեսը լինել: Բայց, ըստ յերևույթին, Պուշկինի համար բոլորովին պարզ եր այդ ձեռնարկումների բնույթը, նա հրաժեշտ ավեց Պասկևիչին և մեկնեց Ռուսաստան:

*
**

Վորքան ավելի յեր առնականանում Պուշկինի ըս-

տեղծագործությունը, վորքան նա առաջ եր գնում, այնքան ավելի քիչ եր սկսում նրան հասկանալ քնննադատությունը, այնքան ավելի սառն եյին վերաբերվում ընթերցողները նրան:

«Պուտավա»-ն սառն ընդունելություն գտավ հասարակության կողմից, իսկ Բուլգարինի որդան «Սեվերնայա Պչելա»-ն չարախնդորեն զրոււմ եր «Հասարակության կողմից «Պուտավա»-յին ցույց տրված սառն ընդունելությունը պարզ ապացույց ե այն բանի, վոր անունների համայքն անհետացել ե»:

Անտարբերությամբ ընդունվեց «Բորիս Գոդունով»-ը, վորը 1830 թվին վերջապես լույս տեսավ: Նրա մասին գրում եյին. «Պոեզիան ստեղծագործություն ե. իսկ այստեղ վոչ մի որիգինալ ստեղծագործություն չկա: Բորիսը և Շույսկին չափածոյի յեն փոխադրված լոկ Կարամզինի յերգածաչն պոեմից»: «Ոնեգին»-ի յթի բորդ գլխի, այդ վեպի լավագույն գլուխներից մեկի մասին հայտարարում եյին՝ «լիակատար անկում»:

Պոնդ փակվելով սառը և լռին մենության մեջ, Պուշկինը գրում եր.

Պոետ, մի գնահատիր դու սերը ժողովրդի,
Շուտ կլուի աղմուկը դովետների խանդավառ.
Կչես դատն հրմարը, սառ ձիծաղը ամոսի,
Բայց անտանձան մեա դու, մեա հանդրստ և մոսլի:
(Թարգմ. Վեսպեր)

Պուշկինի հասարակական աշխարհայեցողության մեջ դեռևս զեկտեմբերյան ապստամբությունից առաջ սկսված բեկումը ժամանակի ընթացքում անընդհատ աւժեղացավ:

Նա առաջվա պես գառնորեն ցավում էր տաժա-
նակիր աշխատանքի ուղարկված զեկարրիստների հա-
մար, չեր կորցնում հույսը, վոր նրանց ներուժն կը-
շնորհեն, բոցավառ վողջույն էր ուղարկում նրանց՝
Միրիբ և գոշակում էր ցանկալի ժամանակների գա-
լուստը:

Յե՛վ կրնինեն մի որ շղթաները ձեր,
Բանտը կդառնա խղճուկ ասիրակ,
Ազատութունը դե՛ս կվաղի ձեզ,
Ու ընկերներեց սրեր կստանաք:

(Թարգմ. Դ. Դեմիրճյան)

Նա իրեն նկարագրում էր յերգիչ Արիօնի կեր-
պարանքով, վորը փրկվեց ընդհանուր նավախորտա-
կումից:

Կորան լուղորդն ու զեկավար,
Ո, յես միայն, յերգիչս վառ,
Խորհրդավոր՝ ափ նետվեցի՝
Յե՛վ յերգում եմ յես առնացի՝
Նախկին հիմներն ահա կրկին,
Ու թաց զգեստս տրեգակի
Ներքո փառ՝ մի ժայռի տակ
Չորացնում եմ:

(Թարգմ. Վեսպեր)

Բայց նախկին հիմների համար նա այժմ հավատ
չուներ. զեկարրիստների գործը նա անհուսալիորեն
տանուլ տված էր համարում:

ՄՈՍԿՎԱՅԻՆ ԹԵՎ ԲՈՒԴԻՆՈՅԻՄ

1830 թվի վաղ գարնանը Պուշկինի՝ Մոսկվայի
բարեկամներից մեկը պարահանդեսում Նատալիա Նի-
կոլանա Գոնչարովայի և նրա մոր հետ խոսեց Պուշ-

կինի մասին: Մայր ու աղջիկ բարեհաճորեն աբտա-
հայտվեցին Պուշկինի մասին և խնդրեցին բարեկ-
նքան: Պուշկինը հոգով կենդանացավ, մի ակնթար-
թում պատրաստվեց և Մոսկվա սլացավ: Նա այցելեց
Գոնչարովներին: Նրան փառաբանքով ընդունեցին:
Նա դարձյալ սկսեց լինել նրանց տանը և ապրելի
6-ին չերկրորդ անգամ առաջարկութուն արավ:

Պուշկինի առաջարկութունն ընդունվեց:

1830 թվի մայիսի 6-ին տեղի ունեցավ Պուշ-
կինի պաշտոնական նշանդրեքը Նատալիա Նիկոլայե-
նա Գոնչարովայի հետ: Պուշկինի հայրը վորդու-
ամուսնության առթիվ Նիժնի — Նովգորոդի իր կալ-
վածքներից նրան հատկացրեց Կրիստենեվ գյուղի յեր-
կու հարյուր չգրավադրված գյուղացիական «շունչ»:
Աշնան սկզբին Պուշկինը գնաց Նիժնի — Նովգորոդի
նահանգը, վորպեսզի անցնի կալվածքի գլուխը և
կարգի բերի իր գույքային գործերը: Նա նախատե-
տում էր շատ քիչ մնալ այնտեղ: Այն ինչ Վոլգայով
դեպի վերև էր բարձրանում խոլերան: Մոսկվայից հաշ-
ված յերկրորդ կայանում Պուշկինն իմացավ, վոր խո-
լերան արդեն հասել է Նիժնի: Յերբ նա չեկավ Բու-
դինո (հայրենական կալվածքը), շրջապատի գյուղերը
շղթայվեցին պահակներով, ամեն տեղ կարանտիններ
դրվեցին: Ժողովուրդը տրտնջում էր, տեղ-տեղ բուռ-
տեր եյին բռնկում:

Շաբաթներ շաբաթներ, ամիսներ ամիսների
հետևից անցնում եյին, իսկ Պուշկինը դեռ նստած էր
Բուդինոյում: Խոլերան տարածվեց, մոտեցավ Մոսկ-
վային, կարանտինները փակեցին բոլոր ճանապարհ-
ները, Մոսկվան շղթայվեց գինվորական պահակախմ-
բերով: Ասում եյին, թե խոլերան արդեն Մոսկվա-

Թե այժմ ստեղծագործութեան համար ինչպիսի սու-
կալի պայմաններում եր ապրում Պուշկինը: Նա ին-
քըն ել տխրութեամբ գրում եր իր բարեկամներից
մեկին. «Չունեմ ամուրիի ազատ կյանքի հանդիստը»,
վոր անհրաժեշտ ե գրելու համար: Շրջում եմ կիսաշ-
խարհում, կինս շատ մոզայի մեջ ե,— այս ամենը
փող ե պահանջում, փողը ձեռք ե բերվում աշխա-
տութեաններով, իսկ աշխատութեանները առանձնու-
թյուն են պահանջում»: Նոր աշխատութեանների հա-
մար չկար մենութեան. արդեն գրված աշխատութեան-
ների տպագրութեան համար անընդհատ ծագում եյին
Պուշկինին ցույց տրվող բարձրագույն «վոդորմածու-
թյունից», իր յերկերը գրաքննութեան համար կայս-
րին ներկայացնելու իրավունքից ըզլսող խոչընդոտներ:

Պուշկինը լինթագրում եր, թե այդ իր իրավուն-
քն ե,— բանից դուրս յեկավ, վոր դա իր պարտա-
կալութեանն ե: Յեվ Պուշկինը գրում եր Բենկենդորֆին.
«Համարձակվում եմ խնդրել մի վոդորմածութեան
մասին,— առաջիկայում իրավունք ունենալ մանր
չերկերիս համար դիմելու սովորական գրաքննու-
թեան»: Ահա թե ինչպիսի շնորհի մասին ստիպված
եր միջնորդութեան հարուցել Պուշկինը:

Պուշկինը սաստիկ աշխատում եր արխիվներում,
ցարի հանձնարարած Պետրոս V-ի պատմութեան հա-
մար նյութեր հավաքելով: Բայց Պետրոսի պատմու-
թեան վերարերջալ նախապատրաստական աշխատան-
քից նրան կտրում եր մի ալ աշխատանք: Պուշկի-
նին հետաքրքրում եր 18-րդ դարի կազակալին գյու-
ղադիական ապստամբութեան առաջնորդ Պուզաչովը:
Միևնույն ժամանակ նա միտք հղացավ մի վեպ գրել

Պուզաչովի ժամանակաշրջանից: Դրա համար Պուշկի-
նը պետք ե այցելել Արևելյան Ռուսաստանի վայրե-
րը, ուր գործել եր Պուզաչովը: Պուշկինը չորս ամսով
արձակուրդ ստացավ և 1833 թվի հուլիսի 17-ին
մեկնեց Պետերբուրգից: Իսկ նրա հետևից դեպի այն-
նահանգների պետերը, ուր պետք ե այցելել Պուշկի-
նը, հոսեցին գաղտնի հրահանգներ — «հիմնարկութեան
մեջ պատշաճ կարգադրութեան անել տխրոսավոր
խորհրդական Պ. շկինի մասին» նրա տեղում լինելու
ժամանակամիջոցում վոստիկանական գաղտնի հսկո-
ղութեան սահմանելով նրա ապրելակերպի ու վարքի
նկատմամբ»:

Պուշկինն այցելեց Կազան, Որենբուրգ, Ուրալսկ:
Հին բնակիչներին հարց ու փորձ արավ Պուզաչովի
մասին, դիտեց ռազմական գործողութեանների վայ-
րերը: Որենբուրգից նա գնաց Բերգա ստանցիան,
Պուզաչովի նախկին մայրաքաղաքը:

Բերգայում Պուշկինը գտավ մի պառավ, յոթանա-
սունհինգամյա մի կազակուհի, վորն անձամբ ճանա-
չել եր Պուզաչովին: Պուշկինը նրա հետ նստեց ամբողջ
առավոտ, հարց ու փորձ արավ նրան, լսեց նրա յեր-
գերը և հրաժեշտի ժամանակ նրան տվեց մի վոսկի
չերվոնեց:

Պուշկինը մեկնեց: Բերգայի բնակիչները մեծապես
զարմացել եյին. ինչո՞ւ չեկավ այդ մարդը, տաք-տաք
հարցեր տվեց ավագակի մասին, վորի համար պառա-
վին մի չերվոնեց տվեց: Կասկածելի բան ե, վայ թե
գժարխտութեան դուրս գա: Մի սայլ ուղարկեցին
Որենբուրգ, պառավին իր չերվոնեցի հետ միասին
ներկայացրին իշխանութեանը և զեկուցեցին:

րում հասարակութեանը, վորը հափշտակութեամբ կարգում եր Բենեդիկտովի եֆեկտավոր, շառաչուն վտանավորները, Մառլինսկու գունագեղ արծակը և անտարբերութեամբ անցնում Պուշկինի կողքով: Քննադատութունը հաշվի առավ այդ հարաբերութեանը, եւ ավելի անզուսպ կերպով սկսեց հարձակվիլ Պուշկինի վրա:

Պուշկինը քիչ եր գրում, գրածի նկատմամբ շատ խիստ եր և այդ պատճառով եւ շատ չեր տպագրում: Շատ բան եւ գրաքննութեանն եր արգելում: Պուշկինի կյանքի վերջին վեց տարում ընթերցողը նրա խոշոր գեղարվեստական յերկերից կարողացել եր ծանոթանալ միայն «Պիկովայա դամա»-յին և «Կապիտանի աղջկան»:

Կիսաշխարհում նրան չեյին սիրում, վորովհետեւ վախենում եյին նրա սուր, սպանիչ եպիգրամներից, վորոնց նկատմամբ նա ժլատ չեր և վորոնց պատճառով «կիսաշխարհում» վաստակեց անհաշտ թշնամիներ:

*
**

1834 թվի բարեկենդանի շարաթը Նաուսիա Նիկոլաչեֆուան շատ պարելուց հիվանդացավ և, լավանալուց հետո, մինչև աշունը, բոլոր յերեխաների հետ գնաց Կալուզայի նահանգը՝ իր յեղբոր մոտ: Պուշկինը Պատերազմում մենակ մնաց հսկելու «Պուզաչովյան բունտի պատճառութեան» տպագրութեան գործին: Հանկարծ նա Յարսկոյե Սելոյից, Ժուկովսկուց տագնապալի մի նամակ ե ստանում այն մասին, թե Պուշ-

կինի ինչ վոր նամակ հասնի չե դարձել կայսրին. և նա շատ բարկացած ե: Բանից դուրս յեկավ, վոր Մոսկվայի փոստը բաց եր արել Պուշկինի՝ իր կնոջը գրած նամակը և ուղարկել եր չերբորդ բաժանմունքը: Այդ նամակում Պուշկինը գրում եր, թե մտադրութուն չունի ներկա լինել գահաժառանգի չափահասութեան հանդիսավոր տոնին. և բավական անհարգալիբ լեզվով եր արտահայտվել իր կամերձուկութեան մասին: Ժուկովսկուն հաջողվեց գործը հարթել:

Պուշկինը վորոշեց դուրս պրծնել վանդակից, վորի մեջ նրան փակել եր կառավարութեանը: 1834 թ. հունիսի 25-ին նա Բենկենգորֆին հրաժարականի մասին խնդրագիր տվեց: Այդ խնդրագիրը ցարին սաստիկ զայրացրեց: Ժուկովսկին իրար անցավ և սկսեց Յարսկոյե Սելոյից Պուշկինին նամակներով ուրակոծել, նրան մեղադրելով հիմարութեան և անտակաութեան մեջ: Ժուկովսկու ճնշման ներքո, Պուշկինը հետ վերցրեց խնդրագիրը:

Ինչհա կառավարութեան վերաբերմունքը Պուշկինի հանդեպ այդքան թշնամական ու կասկածամիտ եր: Պուշկինն իր ամբողջ ելուցամբ անընդունելի յեր ինքնակալութեան համար: Ի՞նչ կարևոր ե, վոր Պուշկինն «ընդունում եր» նրան: Հարկավոր եր վոչ թե ընդունել, այլ խանդավառ սիրել ու գովերգել նրան, առանց քննադատութեան, առանց ինքն իրեն զսպելու և առանց հետ նաչելու: Իր «Ռուսաստանի զրպարտիչներին», «Բորոդինյան տարեդարձը» ներբողներով: Պուշկինը քիչ մնաց այդ ուղին բռներ, բայց իսկույն հետ դարձավ և այլևս չվերադարձավ:

Իսկ Նիկոլայի ինչին էր պետք «պարզապես» հանճարեղ բանաստեղծը, վորը «պարզապես» հանճարեղ չիբկեր էր ստեղծագործում: Պուշկինը չէր տեղավորվում Նիկոլայան ինքնակալութան շրջանակների մեջ վոչ թե իբրև նրա թշնամի, այլ իբրև ամենավիթխարի մի կուլտուրական յերևույթ, վորը գերաճել էր նրա շրջանակներից դուրս: Արքունական աշխարհիկ կյանքի շրջանակներում ևս Պուշկինը չէր տեղավորվում դարձյալ վոչ թե իբրև նրա ժխտողը, այլ իբրև խորապես կուլտուրական, արժանապատվությամբ լեցուն մարդ, վոր որդանապես անընդունակ էր պալատական ծառա դարձնալու:

Նիկոլային հաջողվեց նրան ծունկի բերել, բայց ծնկաչոք դրության մեջ ել Պուշկինը կանգուն էր, առանց խոնարհելու հպարտորեն բարձրացրած գլուխը: Կայսրն այդ տեսում էր և զգում, վոր Պուշկինն «ոտաք» է ու ամեն ինչի ընդունակ:

Իսկ դեռ շատ բան չգիտեր կայսրը Պուշկինի մասին: Դեռ նույն 1827 թվին, յիբր Պուշկինը յերես էր դարձրել «ամիկից», — դեռ այն ժամանակ մի չհղկված սևագրության մեջ նա մտախոհ այսպիսի տողեր էր գրում:

Վոսկե շրջանում մեծատունների՝
Ցարերից շոյված՝ պոետին յերանի,
Ծիծաղ ու արցունք միշտ ունենալով,
Դառն ճշմարտությամբ սուտն համեմելով,
Բթացած ճաշակն է նա զրդոում
Յեվ բոյարներին փառքի յե զրդում.
Նա զարգարում է ճոխ խնջույքները,

Լսում է նրանց իմաստուն գովքը.
Մինչդեռ, ծանրաշարժ դռներից այն կողմ,
Խռնըվելով տան մուտքի մոտ հետին,
Ծառաների բերտ հրմշտոցի տակ՝
Ամբոխը հեռվից լսում է յերգչին:
(Թարգմ. Մ. Դուրգարյան)

Այժմ, ծառաներից հրմշտավող այդ ժողովուրդը, վորը հարգանքով լսում է բանաստեղծին սև ճաղերի մոտ, Պուշկինի առջև բարձրանում է վորպես նոր, ամենացանկալի ունկնդիր: Մահվանից կես տարի առաջ նա գրում է «Հուշարձանը»-ը, վորը հրաշալի յե՞ Պուշկինի համար միանգամայն նոր մոտեցումով դեպի պոեզիայի խնդիրները և իր սեփական բանաստեղծական արժանիքների գնահատումով: Իր ձևով այս բանաստեղծությունը Դերժավինի համանուն բանաստեղծության նմանողությունն է: Դերժավինն իր «Հուշարձան»-ում թվում է այն արժանիքները, վորոնք, նրա կարծիքով, նրան իրավունք են տալիս հիշվելու հետագա սերունդների կողմից: Այդ արժանիքները Յեկատերինա յերկրորդի «աստվածանման Ֆելիցայի» յերգիչը տեսնում էր այն բանում.

Վոր առաջինն հանդգնեցի զըվարձալի ոռու
լեզվով
Ազգարարել Ֆելիցայի առաքինի գործերը,
Աստճո մասին միշտ զրուցել մի պարզու-
թյամբ սրտազին
Յեվ ժպտալով՝ ճշմարիտ խոսք ասել ցարի
յերեսին
(Թարգմ. Մ. Դուրգարյան)

Ընդգծված ձևով իրեն նրան հակադրելով, ահա թե ինչպես եր փառքի իր իրավունքները հիմնավորում Պուշկինը. նա պարծենում եր, վոր իր հուշարձանը չի ծածկի ժողովրդական շավիղը և վոր այդ հուշարձանն անհնազանդ գլխով բարձրացել և ավելի վեր, քան ամեն տեսակ ցարական հուշարձանները: Յեվ ինչի՞ համար և նա սպասում ժողովրդից ճանաչվել:

Յեվ դեռ յերկար յես կլինեմ ժողովրդին սիրելի,
Վոր լարելով իմ քնարը՝ արթնացրել եմ միշտ բարին,
Վոր իմ գաժան ու բիրտ դարում ազատութուն եմ
Ընկածներին համար յես միշտ կարեկցութուն եմ հայցել:
(Թարգմ. Մ. Դուրգարյան)

Մեծ դարմանք և առաջացնում «Հուշարձանի» յեղրափակիչ տունը:

Աստվածային կամքին, մուսն, միշտ հնազանդ յեղիր դու
Անվախ ամեն պարսավանքից, առանց պսակ հայցելու,
Զրպարտութուն ու գովասանք դու սառնարյուն
Ընդունիր
Յեվ տրամարի վերաբերմամբ դու յերբեք մի առարկիր:
(Թարգմ. Մ. Դուրգարյան)

Սա հասկանալի և լիովին տեղին կղառնա, յեթե բանաստեղծության մեջ մենք տեսնենք վոչ միայն իր նախկին բանաստեղծական գործունեություն արդյունքների ամփոփումը Պուշկինի կողմից, այլև վրձաական հայտարարութունն այն մասին, վոր ինքն անցնում և բոլորովին նոր բանաստեղծական դիրքերի: «Բարի զգացմունքներ արթնացնելը», «ազատութուն փառաբանելը», «ընկածների նկատմամբ վողորմած լինելու կոչ անելը»,— ահա թե ինչն և այժմ ա-

մենից ավելի սկսում գնահատել Պուշկինն իր անցյալ գործունեությունից մեջ և ահա թե ինչն է նա տեսնում «աստծու հրամանը» ապագայի գործունեություն համար: Թևակոխելով այդ նոր ուղին, նա պատրաստ և հիմարի ծաղրին, վիրավորանքին և զրպարտանքին. այդ ճանապարհին նրան հարկավոր չեն վնչ գովեստներ, վնչ ևլ պսակներ:

Պուշկինն այժմ ձգտում և մոտենալ Բելինսկուն. իր արհեստիկրատ բարեկամներից թագուն նրան և ուղարկում իր «Սովրեմեննիկ» հանդեսը, պատրաստվում և նրան հրավիրել աշխատակցելու այդ պարբերականին: Պուշկինի պոեզիայի մեջ սկսում են հնչել վաղուց մոռացված հնչյուններ:

Քաղաքացիական խորը գայրույթով և լեցուն մի բանաստեղծութուն, վորը կրում և «Աշխարհիկ իշխանութուն» գրգռիչ վերնագիրը («Յերբ կատարվեց մեծ հաղթանակը...»): Պուշկինն սկսում և զբամա գրել Ֆեոդալական ասպետության ժամանակներից, հոյակապ մտահղացում ունենալով ցույց տալ ասպետական արնվականության ջախջախումն այն ժամանակվա դեմոկրատիայի՝ գյուղացիության և քաղաքային աճող բնակչության կողմից: Դրված են սկզբնական տեսարանները միայն, բայց մեղ հասել և ամբողջ դրամայի պլանը պարունակող կոնսպեկտը, և նրանից յերևում և, թե ինչպիսի հեղափոխական պաթոսով պետք և շնչեր այդ դրաման:

* * *

Պուշկինի նյութական գրութունը գնալով ավելի ու ավելի յեր խճճվում: Կյանքը Պետերբուրգում

այնպիսի պահանջներով, վոր առաջադրում էյին արքունական կյանքն ու նրա կնոջ աշխարհիկ հաջողութիւնները, ամենեկին չէր համապատասխանում նրա միջոցներին: Պարտատերերը պաշարում էյին նրա բնակարանը, վճարելու պահանջներով լեցուն նամակներ էյին տեղում: 1835 թ. ամռանը Պուշկինը նորից փորձ կատարեց դուրս պրծնել Պետերբուրգից: Նա Բենկենդորֆին գրեց. «Յես ինձ հարկադրված եմ տեսնում վերջ դնել այն ծախքերին, վորոնք տանում են միայն դեպի պարտք և վորոնք ինձ համար պատրաստում են անհանգստութեամբ ու դժվարութիւններով, յեթե վոչ աղքատութեամբ ու հուսահատութեամբ լեցուն մի ապագա: Յերեք կամ չորս տարի մնալով գյուղում, յես նորից հնարավորութիւն կունենամ վերադառնալ Պետերբուրգ և ձեռնարկել այն զբաղմունքներին, վորոնց համար չես պարտական եմ նորին մեծութեան բարութեանը»:

Յարը նորից մերժեց և միայն թույլ տվեց Պուշկինին փոխ տալ չերեսուն հազար ռուբլի, իսկ այդ պարտքը մարելու համար պահել նրա ռոճիկը: Այդ փողերը գնացին ամենակենսական պարտքերի վճարմանը, Պուշկինն այլևս ռոճիկ չստացավ և չեկամուտի միակ աղբյուրը նրա համար մնաց գրական աշխատանքը: Բայց մշտական հոգսերի և անախորժութիւնների մեջ, վորոնցով շրջապատված ապրում էր այժմ Պուշկինը, նա աշխատել չէր կարող: «Այստեղ Պետերբուրգում, — գրում էր նա հորը, — յես վոչինչ չեմ անում, միայն թե գրգռվում եմ մաղձոտութեան աստիճանի»:

Գրելը դադարեց նաև գյուղում, ուր սովորաբար

գնում էր Պուշկինն աշնանն աշխատելու համար: 1835 թվի աշնանը նա գնաց Միխայլովսկոյե, ապրեց մի ամիս և գրեց կնոջը. «Այսպիսի անպտուղ աշուն ամենեկին ինձ չէր պատահել: Գրում եմ, բայց անշնորհք: Ներշնչման համար հոգեկան հանգիստ ե հարկավոր, իսկ չես ամենեկին հանգիստ չեմ»:

Վաղուց տեսնում եմ վիճակ խնդաղին.

չոգնաբեկ ստրուկս վաղուց եմ ուղել՝

Աշխատանքի ու մաքուր գրգանքի

Դեպի հեռավոր ոթեանն փախչել

(Թարգմ. Մ. Դուրգարյան)

Բայց Նատալիա Նիկոլայիվնան այդ «փախստին» ամենեկին համամիտ չէր: Նա չէր կարող տանել գյուղը, Պուշկինի հետ անցկացրած ամբողջ կյանքի ընթացքում վոչ մի անգամ չէր յեղել վնչ Միխայլովսկոյեյում, վնչ էլ Բոլգինոյում: Ամռանը նրանք թանգ ամառանոց էյին վարձում Պետերբուրգի մոդայի մեջ յեղած վորևե կղզում, ուր կարելի յեր ապրել նույն աղմկալի գվարթ կյանքով, ինչպես ձմռանը: Նատալիա Նիկոլայևնայի աշխարհիկ հաջողութիւնները շարունակ մեծանում էյին: Այժմ արդեն վոչ թե Պուշկինն էր նրան լուսավորում իր փառքով, այլ նա, բոլորին իրենով հիացրած գեղեցկուհին էր լուսավորում նրան, համեստ տիտղոսավոր խորհրդականին և «հեղինակին»:

1834 թվին Պետերբուրգ յեկավ յերիտասարդ Ֆրանսիացի բարոն Ժորժ Դանտեսը, վորն «որինական» Բուրբոնյան դինաստիայի կողմնակից էր:

1830 թվի հեղափոխությունից հետո, վորը տապալեց Բուրբուրներին, նա չցանկացավ մնալ և ծառայել Ֆրանսիայում: Պետերբուրգում Դանտեսն իր ունեցած կապերի շնորհիվ ուղղակի սպա ընդունվեց բոլոր գվարդիական հեծելազորային զնդերից առաջնագույնը հանդիսացող հեծելապահանորգական գնդում: Կիսաշխարհում նա իսկուցն և եթ նկատելի դիրք գրավեց: Բարձրահասակ, գեղեցկադեմ, ինքնավստահ, զվարթ, սրամիտ մարդ լինելով, նա ամեն տեղ ցանկալի հյուր էր:

Պուշկինը Դանտեսի հետ ծանոթացավ նրա Պետերբուրգ գալուց մի փոքր հետո: Դանտեսի Փրանսիական աշխուժությունը, զվարթությունը և սրամտությունը գուր ելին գալիս Պուշկինին: Դանտեսը սկսեց լինել նրանց տանը: Նրան ուրախությամբ եյին ընդունում նաև Պուշկինին մոտիկ ընտանիքներում — Կարամզինների, Վյազեմսկիների ընտանիքներում: Հաճախ ելին իրար հանդիպում: Դանտեսը սիրահարվեց Պուշկինի կնոջը: Նա անընդհատ հետևում էր Նատալիա Նիկոլայեվնային, յերևում էր ամեն տեղ, ուր լինում էր նա, պարահանդեսներում միայն նրա հետ էր պարում: 1836 թ. ամռանը այդ ժամանակ մոզադարձած Հանքային ջրերում (Յելագինի կղզում) տեղի ունեցած մեկ յերկու պարահանդեսից հետո, բոլորը սկսեցին խոսել Դանտեսի սիրային հետապնդողուհիների մասին: Պուշկինը բացատրություն ունեցավ Նատալիա Նիկոլայեվնայի հետ և Դանտեսին մերժեց իր տունն ընդունել: Բայց սիրահարվածները շարունակում եյին տեսնվել ընդհանուր ծանոթների տանը և կիսաշխարհիկ պարահանդեսներում:

Պուշկինի գլխավերևում, վորպես աշնանային կղզի

չող ճանճ, ավելի ու ավելի աներեսաբար սկսեց ձախրել «կոտոշավոր» զարհուրելի բառը: Մի պարահանդեսում՝ մի յերիտասարդ սրիկա, շփերթ իշխան Պ. Վ. Դոլգորուկովը, իր բարեկամներին աչքով ցույց տալով Դանտեսին, Պուշկինի գլխին հետևից կոտոշների պես բարձրացրեց մատները:

ՄԵՆԱՄԱՐՏԸ

Դրաման արագորեն հասունանում էր: Պուշկինը հավատ էր ընծայում կնոջը և չէր կասկածում նրա հավատարմության մասին: Բայց նրան կատաղեցնում էր «կոտոշավորի» այն դերը, վոր իրեն չարախնդար վերագրում էյին կիսաշխարհում:

Իսկ այստեղ խոսում էյին վոչ միայն Դանտեսի մասին: Պուշկինը պատմում էր իր բարեկամ Նաչոկինին, վոր Նիկոլայը սպայի պես հետապնդում է իր կնոջը, առավոտները դիտմամբ մի քանի անգամ անցնում է նրա լուսամուտների տակով, իսկ յերեանցնում է նրա լուսամուտների տակով, թե կոյան դեմ պարահանդեսներում հարց է տալիս, թե ինչո՞ւ նրա լուսամուտների վարագույրները միշտ իջեցված են:

1836 թվի նոյեմբերի 4-ին Պուշկինը քաղաքային փոստով ստացավ փոխված ձեռագրով գրված հետևյալ բովանդակությամբ անանուն մի պասկվիլ:

«Կոտոշավորների ճաճանչափայլ Որդենի մեծ ասպետները, հրամանատարները և կավալերներն իրենց ընդհանուր ժողովում, Որդենի մեծ մագիստրոս, նորին գերազանցություն Դ. Լ. Նարեշկինի նախագահությամբ, միաձայն ընտրեցին Ալեքսանդր

Պուշկինին կոտորածները Որդենի մեծ մագիստրոսի տեղակալ և Որդենի պատմագիրը»:

Նույնպիսի նամակներ ուղարկվեցին նաև Պուշկինի բազմաթիվ ծանոթներին: Դ. Լ. Նարիշկինը կայսր Ալեքսանդր I-ի հետ լեռնաբարձի կապ ունեցած գեղեցիկուհի Մարիա Անտոնովնայի ամուսինն էր: Պուշկինին Նարիշկինի տեղակալի պաշտոն շնորհելով, պատկվելը միանգամայն պարզ կերպով ակնարկում էր, վոր Պուշկինի գրությունը Նիկոլայի նկատմամբ նույնպիսին է համարվում, ինչպես Նարիշկինի գրությունն Ալեքսանդրի նկատմամբ: Ինչպես այժմ պարզվում է, պատկվելը գրել էր Պ. Վ. Դոլգորուկովը, բայց նրա հետևում կանգնած էր Պուշկինի կիսաշխարհիկ թշնամիները մի ամբողջ վոհմակ այդ թվում, ըստ յերեվոյթին, Ժողովրդական լուսավորության միսիստր Ուվարովը, վորին Պուշկինը ծաղրել էր «Լուկուլլոսի ապաքինման առթիվ» սատիրայում: Բայց Պուշկինը, չգիտես ինչու, կասկածեց, վոր պատկվելը ուղարկել է հոլանդական դեսպան Գեկկերները: Գեկկերները ցոփ ու չարամիտ բամբասաններ մարդ էր: Նա կրքոտաբար սիրում էր Դանտեսին և կեստարի առաջ վորդեգրել էր նրան, այնպես վոր Դանտեսն այժմ կոչվում էր բարոն Գեկկերն: Դեսպանին մենամարտի կանչելը Պուշկինն անհարմար համարեց և մարտակոչն ուղարկեց Դանտեսին:

Ծերունի Գեկկերները շատ վախեցավ այն հետեվանքներից, վոր կարող էր ունենալ իր և իր վորդեգրի կարերայի համար առաջիկա մենամարտը: Դանտեսի հետ միասին նրանք այսպիսի մի յեղք մտածեցին: Դանտեսին վաղուց արդեն սիրահարված

էր Նատալիա Նիկոլայեվնայի մեծ քույրը՝ Յեկատերինա Գոնչարովան: Այժմ, անախորժ դրուժնուհից գուրս պրծնելու համար, վորի մեջ դրել էր նրանց Պուշկինի մենամարտի կոչը, Գեկկերները հայտարարեցին, թե Դանտեսը վոչ թե Նատալիա Նիկոլայեվնային է հետապնդում, այլ նրա քրոջը և պատրաստ է ամուսնանալ նրա հետ: Պուշկինն իր մարտակոչը հետ վերցրեց: 1837 թվի հունվարի 10-ին տեղի ունեցավ Դանտեսի և Գոնչարովայի հարսանիքը: Այսպիսով Դանտեսը դարձավ Պուշկինի ազգականը: Նա հարսանիքի հրավերով գնաց Պուշկինի մոտ, բայց Պուշկինը չընդունեց և հրամայեց հաղորդել, վոր չի կամենում նրա հետ վոչ մի հարաբերություն ունենալ:

Սակայն նրանք շարունակ հանդիպում էին կիսաշխարհիկ պարահանդեսներում և ընդհանուր ծանոթները տանը: Դանտեսը շարունակում էր Նատալիա Նիկոլայեվնային հետապնդել լիտիության չափերի հասնող համառությամբ: Պուշկինի կատաղությունը նրան զվարճացնում էր, և նա նրա ներկայությամբ առանձին ջանասիրությամբ էր սիրաբանում Նատալիա Նիկոլայեվնայի հետ:

Պուշկինը գրեթե խելագարության աստիճանի հասավ:

1837 թվի հունվարի 26-ին նա ավագ Գեկկերներին մի նամակ ուղարկեց, վորը լիքն էր ամենատեսակի վիրավորանքներով:

Այդ նամակից հետո մենամարտն անխուսափելի դարձավ: Հենց դրան էլ ձգտում էր Պուշկինը խճճված դրությունից դուրս գալու այլ յեղք նա չէր

տեսնում: Գեկկերնի և Դանտեսի համաձայնությամբ, Պուշկինին մարտակոչ ուղարկեց Դանտեսը: Մարտակոչը ստանալով, Պուշկինն իսկույն հանգստացավ:

Առավոտը Պուշկինը վաղ վեր կացավ: Նախորդ որվա պես նա զվարթ էր, թեթև ու հանգիստ: Թեջ խմեց և նստեց գրելու: Նամակ չեկավ Դանտեսի վկա դ՛ Արշիակից: Նա Պուշկինին խնդրում էր իր վկային ուղարկել բանակցությունների համար: Պուշկինը գընաց վկա փնտռելու, Պանտելեյմոնովսկայա փողոցում նա պատահմամբ հանգիպեց իր լիցեյի հին ընկերներից՝ ճարտարագիտական գործերի փոխ-գնդապետ Կ. Կ. Դանդասին և խնդրեց իր վկան լինել: Դանդասը պատրաստակամությամբ համաձայնեց: Նա գնաց դ՛ Արշիակի մոտ. նրանք յերկուսով մշակեցին մենամարտի սլայմանները: Դանդասը Պուշկինին բերեց մենամարտի գրավոր պայմանները: Պուշկինը չկարգաց, ամեն ինչի համաձայնեց և Դանդասին ուղարկեց ատլըճանակ գնելու: Իսկ ինքն ուրախ զվարթ նստեց և սկսեց զբաղվել իր «Սովրեմեննիկ» հանդեսի գործերով: Բաց արավ Իշիմովայի «Ռուսաստանի պատմությունը մանկական պատմվածքներով» գրքույկը և սկսեց կարդալ:

Պայմանագրված ժամին նա միացավ Դանդասին Նեվսկի պրոսպեկտի անկյունում գտնվող Վոլֆի հրուշակարանում: Նրանք սահնակ նստեցին և գնացին հանգիպման նշանակված վայրը — Չոռնայա վտակի վրա գտնվող Կոմենդանտսկայա ամառանոցը: Այնտեղ հասան հակառակորդների հետ միաժամանակ: Դնացին պուրակը, ընտրեցին հարթավայր տեղ: Այդ վայրը ծածկված էր ձյունակույտերով: Յերկու վկաները

և Դանտեսը սկսեցին ձյան մեջ վտառելով լայն շավիղ բաց անել, վորով պետք է իրար մոտենային հակառակորդները: Պուշկինը, արջի մուշտակում փաթաթված, նստել էր ձյունակույտի վրա և անհամբեր սպասում էր: Վկաները շավիղում չափեցին քայլերը, վորպես պատենը ձյան վրա դրին իրենց մուշտակները և սկսեցին լցնել ատրճանակները: Պուշկինն անհամբերությամբ հարց տվեց.

— Դեհ, վերջացրի՞ք:

Ամեն ինչ պատրաստ էր: Հակառակորդներին կանգնեցրին իրենց տեղերը, նրանց հանձնեցին ատլըճանակները: Դանդասը ազդանշան տվեց, գլխարկը թափահարելով:

Պուշկինն արագ մոտեցավ պատենչին, կանգ առավ և սկսեց ատրճանակով նշան բռնել: Բացյ այդ ժամանակ Դանտեսը, դեռևս պատենչից մի քայլ հեռավորության վրա, կրակեց: Պուշկինն ընկավ շինելի վրա, վորը վորպես պատենչ էր ծառայում: Նա յերեսնիվայր անշարժ պառկած էր: Վկաները և Դանտեսը նետվեցին դեպի նա: Պուշկինն ուղքի յեկավ, բարձրացրեց գլուխը և ասաց.

— Սպասեցեք: Յես ինձ մեջ բավականաչափ ուժ եմ զգում կրակելու համար:

Դանտեսն իր տեղը վերադարձավ, կողքի կանգնեց և կուրծքը ծածկեց աջ ձեռքով: Պուշկինը բարձրացավ ծնկների վրա և, կիսապառկած դրությամբ, սկսեց նշան բռնել: Յերկար նշան բռնեց: Վորոտաց կրակը Դանտեսն ընկավ: Պուշկինը Նետեց ատրճանակը և բացականչեց. — Բրավո:

Յեկ նորից անզգա ընկավ ձյան մեջ: Սակայն

Դանտեսին տապալել եր միայն ուժեղ կոնտուզիան.
գնդակը ծակել եր ձեռքի մտուտ մասը և կպել անդ-
րավարտիկի կոճակին. հենց այդ կոճակն էլ փրկեց
նրան:

Ուշքի գալով Պուշկինը հարցրեց գ' Արշիակին.

— Մպանեցի՞ նրան:

— Վոչ, վիրավորեցի՞ք:

— Տարորինակ ե, — ասաց Պուշկինը, — յես կար-
ծում եյի, թե ինձ բավականությունն կպատճառի նը-
րան սպանելը, բայց հիմա զգում եմ, վոր վոչ... բայց
և այնպես, միևնույն ե: Հենց վոր լավանանք, նորից
կսկսենք:

Ընդհանուր ջանքերով վկաները Պուշկինին սահ-
նակ նստեցրին: Կոմենդանտսկայա ամառանոցի մոտ
նրանք մի կառք գտան, վորն ամեն պարագայի հա-
մար ուղարկել եր Գեկկերնը: Դանտեսը և գ' Արշիակը
առաջարկեցին Դանդասին կառքն ոգտագործել Պուշ-
կինի համար: Դանդասն ընդունեց առաջարկը: Առանց
Պուշկինին ասելու, թե ում կառքն ե, նա Պուշկինին
նստեցրեց և նրա հետ քաղաք գնաց:

Նատալիա Նիկոլայեվնան վաղուց եր վերադար-
ձել զբոսանքից և իր քրոջ՝ Ալեքսանդրայի հետ Պուշ-
կինին ճաշի յեր սպասում: Հանկարծ առանց զեկու-
ցելու մտավ Դանդասը և, աշխատելով հանգիստ լինելը
հաղորդեց, վոր Պուշկինը հիմա մենամարտեց Դան-
տեսի հետ և վիրավորված ե, բայց շատ թեթեւ: Նի-
կոլայեվնան նետվեց զեպի գավիթը, ուր արդեն ձեռ-
քերի վրա բերում եյին Պուշկինին: Կինն ուշաթափ-
վեց: Պուշկինին պառկեցրին իր կարիսետում բազմո-
ցի վրա: Ուշքի գալով, կինն ուղեց ներս մտնել, բայց

Պուշկինը բարձրաձայն բղավեց — ներս մի գա: Նա
չեր ուզում, վոր կինը տեսնի իր վերքը, և նրան
կանչեց այն ժամանակ միայն, յերբ արդեն հանվեց-
րել ու պառկեցրել եյին:

Իրար հետեվից յեկան բժիշկները, յեկան Պուշ-
կինի բարեկամները — Ժուկովսկին, Պլենտե, Վյա-
զեմսկին, Ա. Տուրգենևը:

ՄԱՀՎԱՆ ՄԱՀԻՃՈՒՄ

Պուշկինը սաստիկ տանջվում եր, բայց հաճախ
հարցնում եր կնոջ մասին.

— Խեղճը, անմեղ տեղը տուժում ե և պիտի տու-
ժի մարդկանց կարծիքից:

Իրեն՝ կնոջն ասաց.

— Գեղ մի կշտամբիբ իմ մահվան համար: Սա
մի գործ ե, վոր միմիայն ինձ ե վերաբերում:

Լեյբ-վիրաբուժ Արենգոտին նա խնդրեց կայսրին
հաղորդելու իր խնդիրքը այն մասին, վոր Դանդասը
չհետապնդվի մենամարտին մասնակցելու համար: Դան-
դասը նրանից չեր հեռանում: Նա ասաց Պուշկինին,
վոր ուզում ե Դանտեսին մենամարտի կանչել նրա
վրեժը լուծելու համար: Պուշկինը խոժոռեց.

— Վոչ, վոչ: Հաշտություն, հաշտություն:

Չայրույթն ու կատաղությունը, վոր բորբոք-
վում եյին նրա մեջ վերջին ամիսները, այժմ չքացել
եյին. նա հանգիստ եր, հեղ ու խաղաղ: Մի քանի
բարեկամներ այն տպավորությունն եյին ստանում,
վոր Պուշկինը մահ եր փնտուռում և ուրախ եր նրա

համար, վորպես իր անելանելի դրության միակ լուծում:

Պուշկինը փորից եր վերավորված: Գնդակը ջարդել եր նրա դավակի վոսկրը: Վորովայնի խոռոչում վոսկորի կոտրվածքը ճնշում եր փորոտիքի վրա: Այդպիսի դեպքերում առաջին պահանջն ե՛ փորոտիքին լիակատար հանդիստ տալ, կանգնեցնել նրա շարժումն ոպրումի միջոցով: Աչնինչ, միանգամայն անհասկանալի պատճառներով, լեյք-վիրաբուժ Արենդտը հիվանդին լուծողական եր տալիս: Հետեվանքները սոսկալի յեղան: Պուշկինի աչքերը վայրենի փայլ ստացան և, թվում եր, պատրաստ եյին դուրս պրծնել կապիճներից, դեմքը պատվեց սառը քրտինքով, ձեռքերը սառեցին: Չնայած կամքի բոլոր ճիգերին, նա այնպես եր բղավում, վոր բոլորին սարսափեցնում եր: Վախեցած սենեկապանը Դանդասին հայտնեց, վոր Պուշկինն իրեն հրամայեց տալ գրասեղանի դարակը և հեռանալ, իսկ այդ դարակում ատրճանակ կար: Դանդասը շտապեց Պուշկինի մոտ և նրանից խլեց ատրճանակը, վորը նա կարողացել եր թագցնել վերմակի տակ: Պուշկինը խոստովանեց, վոր ուղում եր իրեն սպանել, վորովհետև տանջանքներն անտանելի եյին դարձել:

Առավոտյան դեմ ցավերը փոքր ինչ պակասեցին, և Պուշկինը տիրապետեց իրեն: Յեվ այլևս մինչև մահը վոչ մի հառաչանքով, վոչ մի ճիչով ցույց չտվեց տանջանքները:

Պուշկինի բնակարանի դրսի սանդուղքների մոտ իրար շարդում եյին: Ծանոթ ու անծանոթ խմբվում եյին մուտքի առաջ, անընդհատ հարցեր եյին տե-

ղում.— Երանչպես ե Պուշկինը: Դրությունը չի թեթևացել: Հույս կմն:

Հոծ բազմությունները փակում եյին ամբողջ վոտոցը Պուշկինի բնակարանի առաջ, դրսի սանդուղքներին մոտենալ անհնար եր: Բայց կիսաշխարհի մարդիկ չկալին այնտեղ:

Պուշկինը ժամ առ ժամ թուլանում եր: Մահը մոտենում եր, և նա պարզ գիտակցում եր այդ: Բարեկամներն ասում եյին նրան.

— Մենք բոլորս հույս ունենք, դու ինքդ ել մի հուսահատվիր:

Պուշկինը պատասխանեց.

— Վոչ, չեմ ապրի: Կմեռնեմ, և ինչպես լերևում ե, այդպես ել հարկավոր ե:

Հուլիսի 29-ի կեսորի մոտ Պուշկինը հայելի ուղեց, նայեց ինքն իրեն և ձեռքը թափ տվեց: Չարկերակը պակասեց և շուտով բոլորովին անհետացավ: Ձեռքերը սկսեցին սառել:

Շնչառությունը գնալով դանդաղում եր: Վերջին մի հոգոց և կյանքը դուրս թռավ: Ներկաներն իրենց ամբողջ կյանքի ընթացքում չեյին կարող մոռանալ այն վտեմ, յերանելի անդորրությունը, վորը հոսում եր մահացած Պուշկինի դեմքի վրա:

ԹԱՂՈՒՄԸ

Մոյկայի ափին, այն տան առջև, ուր մեռավ Պուշկինը, այն ժամանակվա համար միանգամայն անսովոր բան եր կատարվում: Մակընթացության ալիքների պես աճում ու աճում եյին ժողովրդի բազմությունները, վորոնք ցանկանում եյին խոնարհվել Պուշ-

կինի աճյունի առաջ: Ականատեսները ցուցմունքով, Պուշկինի դագաղի մոտ յեկել եյին յերեսունից մինչեւ հիսուն հազար հոգի: Քաղաքի բոլոր ծայրերից դեպի Մոկա եյին ձգվում կառքերը: Կառք վարձելիս պարզապէս ասում եյին՝ «Պուշկինի մոտ»:

Պուշկինի դագաղի մոտ բացակայում էր բարձր ազնվականութունը. դագաղի մոտ խմբվել եյին ուսանողներ, ազատ պրոֆեսիայի տեր մարդիկ, ցածր կարգի չինովնիկներ, «ազգային առևտրականներ», «հասարակ ժողովուրդը», ուղիղալ մանր բուրժուազիայի այն նոր ծագած խավը, վորը շուտով «ազնոջին» անունը ստացավ: Պուշկինի թաղման ժամանակ ռազմաչիններն առաջին անգամ յեւան հասարակական ասպարեզ և իրենց զգալ տվին վորպէս հասարակական ուժ:

Վերջին տարիները Պուշկինն ապրում էր հասարակական, կուլտուրական, գրական սոսկալի մենության ողակում: «Ապրիր մենակ», — դառնությամբ ասում էր նա իր մասին: Նա չէր ել կասկածում, թե քանիք քանի հազար ջերմ, անկեղծ բարեկամներ ունի այն ողակի սահմաններից դուրս, ուր նա մաշվում ու կորչում էր: Պուշկինի կենդանության ժամանակ այդ անհայտ բարեկամները կարող եյին շատ բան չնրել նրան, — մահը նրանց զգալ տվեց Պուշկինի մեծ, անփոխարինելի արժեքն ու պետքականութունը: Յեւ նրանք բարձրաձայն, վճռականորեն վոչ թե խոսքով, այլ իրենց բոլոր գործողություններով ասացին — Պուշկինը մերն է:

Յերևան յեկավ այն ժամանակ գրեթե անհայտ բանաստեղծ Լերմոնտովի զայրալի մի բանաստեղծու-

թյուն — բանաստեղծական կրակոտ պրոկլամացիա: Բանաստեղծութունը ձեռագիր արտագրություններով տարածվեց անսովոր արագությամբ, և բոլորը Լերմոնտովի հետ կրկնում եյին.

Դուք, ազահությամբ կանգնած գահի մոտ,
Ազատության ու փառքի դահիճներ,
Որենքի թևի տակ թագնված՝ անամոթ,
Ճշմարտությունն է ձեր առջև լուր...
Բայց կա դատաստան աստծո, լիտինք,
Կն անեղ դատավոր. սպասում է վաղուց,
Անդոր են նրա մոտ հնչուն վոսկինները,
Մտքերն ու գործեր՝ գիտե առաջուց.
Այնժամ դուր է ձեր չարախոսություն,
Նոր պատուհասից ձեզ այն չի փրկի,
Յեւ ձեր սև արյունով դուք չեք լվանա
Արդար արյունը անմեղ պոետի:

(Թարգմ. Մ. Դուրգարյան)

Հասարակական ցասման բուռն պոթիկումը շրջմեցրեց և ահաբեկեց Նիկոլային: Նախ՝ նա անտարբեր վերաբերվեց Պուշկինի մահվանը և լիովին արդարացնում էր Դանտեսի վարքը: Յածից բարձրացող ճնշումը կայսրին հարկադրեց հասկանալ, վոր խնդիրը չնչին «հեղինակին», իր պալատի անաստիճան կամերյունկերին չի վերաբերում, այլ մի մարդու, վորին բարձր են գնահատում յերկրի ամենալայն շրջանները:

Նիկոլայը կամա-ակամա ստիպված յեղավ վերակառուցել իր վերաբերմունքը կատարվածի հանդեպ, ստիպված յեղավ այնպէս ձևացնել, թե ինքն ել է Պուշ-

կինի մահը գնահատում վորպես ազգային մեծ կորուստ: Դատեսն աստիճանազրկվելով զինվոր դարձվեց և իրը և ոտարերկրյա հպատակ, արտաքսվեց Ռուսաստանից: Գեկկերնը Նիգերլանդիայի կառավարութան կողմից հետ կանչվեց դեսպանի պոստից:

Մյուս կողմից, Նիկոլայը շտապեց փակել բուռն թափով յեռացող հասարակական գայրույթի դրսեվորման բոլոր ուղիները: Թերթերին ամենախիստ հրաման տրվեց Պուշկինի մահվան մասին հաղորդելիս «պահպանել պատշաճ չափավորութուն և վայելուչ տոն»: Մի թերթ հանդիմանութուն ստացավ մի թըղթակցութեան համար, վորի մեջ գրված էր, վոր «մեր պոեզիայի արևը մայր մտավ» և վոր «Պուշկինը մահացավ մեծ ասպարեզի կեսին»: Պուշկինի ընակարանի հարևան տներում զինվորական ուղեկալներ գրվեցին, դռան առջև և ընակարանում վխտում էին լըրտեսները: Դիակը դուրս բերելու որվա նախընթաց գիշերը, հունվարի 30-ի լույս 31-ի գիշերը, յերբ բազմութունը ցրվել էր և ընակարանում նստած էին միայն Պուշկինի մի քանի ամենամոտիկ բարեկամները, յեկան ժանդարմները՝ գլխավորութեամբ ժանդարմների կորպուսի շտաբի պետ գեներալ Դուբելտի: Նըրանք դազաղը փոխադրեցին վոչ թե Իսկայիվսկի մայր-յեկեղեցին, ուր հաջորդ որը նշանակված էր թագման ծիսակատարութունը, այլ Կոնյուչեննայի յեկեղեցին: Թագման ծիսակատարութեան որը յեկեղեցու մուտքը շղթայված էր վոստիկանութեամբ և թուլյատրվում էին հատուկ տոմսերով հրավիրվածները: Ծիսակատարութունը կատարեցին, դազաղը դրին յեկեղեցու նկուղը:

Փետրվարի 2-ից լույս 3-ի գիշերը, կես գիշերին, յեկեղեցու մոտեցավ մի սայլ և յերկու ծածկասայլ: Ծածկասայլերից մեկում նստած էր ժանդարմերիական մի սպա, մյուսում՝ Պուշկինի բարեկամ Ա. Ի. Տուրգենևից, վորին հանձնարարված էր դիակին ուղեկցել մինչև վոսկովի նահանգը, Պուշկինի Միխայլովսկոյե գյուղից վոչ հեռու գտնվող Սվյատագորսկի վանքում թաղելու համար: Դազաղը դրին սայլի վրա և ամբողջ ուժով քշեցին քաղաքից դուրս: Պուշկինի նահանգապետին վաղորոք բարձրագուցն հրաման ուղարկվեց՝ դազաղն անցկացնելիս «արգելել ամեն մի հատուկ արտահայտութուն, ամեն մի դիմադրութուն, մեկ խոսքով՝ ամեն մի արարողութուն»:

Յուրատեսակ թաղման սափորը սլանում էր կուրյերական ձիերով գիշեր և ցերեկ, կարծես թե վոճրագործները շտապում էին բոլորից թագուն մինչև վերջը հեռացնել իրենց սև գործը:

Մի փոստային կայարանում, անցկենալիս, մի պրոֆեսորի կին տեսավ իրարանցած ժանդարմներին, վորոնք կառապաններին շտապեցնում էին շուտ լըծել սայլը, ուր չոր խոտի մեջ գրված էր ճիւղպներով փաթաթված դազաղը: Նայողներից մեկին նա հարցրեց, թե ինչ բան է:

— Աստված գիտե, թե ինչ: Ինչ-վոր Պուշկին է սպանվել— փոստի ձիերով, ճիւղպե ու չոր խոտի մեջ փաթաթած քշում են, մեղա աստու, շան պես:

Այսպես թաղեց Նիկոլայի պաշտոնական Ռուսաստանը ռուսական մեծագուցն բանաստեղծին:

Պուշկինի մահվանից անցել է հարյուր տարի։
 Ընկել է ինքնակալութունը, վոր հալածեց և սպա-
 նեց նրան, ընկել են գարշ կարգերը, ուր մարդկան-
 ցից վոմանք աշխատում ու տառապում եյին, իսկ
 մյուսները վոչինչ չեյին անում ու յերանության մեջ
 եյին գտնվում։ Յերբ պատմական բեմը լցվեց աղմը-
 կուն հաղթողով՝ «ռամիկով», Պուշկինի «ճշմարիտ»
 գնահատողները դառնությամբ հալտաբարեցին, թե բար-
 ձըր արվեստի վերջը հասավ, և իրենց՝ «բարձր կուլ-
 տուրայի» կրողներին մնում է հեռանալ գաղտնի սըը-
 բավայրերը և այնտեղ դավանել կուլտը, վորին ջնջե-
 լու յե այժմեյականությունը։

Իսկ ի՞նչ պարզվեց։

Մի ժամանակ Պուշկինը, մեծ մենության մեջ
 մաշվելով, գրում եր.

Վարձահատույց և դատավոր՝ դու ինքդ ես,
 Քո գործը դո՛ւ ամենից խիստ կղատես.
 Ինքդ գո՞հ ես, արվեստավոր անաչառ։
 Գո՞հ ես, խուժանն հայհոյե՞ թող քո վաստակ,
 Ծաղրե բագինդ, ուր վառվում է քո կրակ,
 Յեռոտանիդ գրգվեցնե տղայաբար։
 (Թարգմ. Հ. Հովհաննիսյան)

Յեվ անա ժամանակակից մի բանաստեղծ (Վլ.
 Վասիլենկո), հիշելով Պուշկինի այս դառն տողերը,
 այսպես է դիմում նրան.

Ինչքան փառք են խոնարհվել հնձված,
 Ինչքան գահեր են հարվածվել կացնից,
 Քո յեռոտանին է միայն անշարժ՝
 Աշխարհներ ցնցող «ամբոխի» կողմից։
 (Թարգմ. Մ. Դուրգարյան)

Յեռոտանին չի սասանվի։ Նա կանգնած է ավի-
 լի հաստատ, քան յերբևիցե։ Ընդհանուր սերը դե-
 պի Պուշկինն աճում է տարեց-տարի։ Խորհըր-
 դային յերկրի ազատագրված ժողովուրդները նրա մեջ
 տեսնում են մեծագույն ուղևոր բանաստեղծին, ուղևո-
 րական գրական լեզվի ստեղծողին և ուղևորական նոր գը-
 րականության հիմնադրին, վոր մարդկությունը հարըս-
 տացրեց անմահ յերկերով, վորոնք մինչև այժմ արթ-
 նացնում են հեղափոխական միտքը, պայքարի յեն
 կոչում մարդկության մեծ յերջանկության համար։
 Պուշկինը բոլորի համար դարձել է պետքական և ան-
 փոխարինելիորեն թանկագին։ Պետքական և թանկա-
 գին՝ իր հանձարեղ բանաստեղծական ուժի համար,
 անզուսպ խռովարարության համար, չթուլացող վորո-
 նումների համար, ուրախության և զեղեցկության
 համար, վորով նա թաթավում է կյանքը, խորը մարդ-
 կայնության և կուլտուրականության համար, իր
 խոսքի անզուգական յերաժշտության համար, իր
 խոսքի ազնվազարմ պարզության և հստակության
 համար։

Ժողովրդական այն շավիղը, վորի մասին
 յերազում եր Պուշկինը, դարձել է լայն, ա-
 ռատորեն կոխտվող ճանապարհ։ Պուշկինի գըը-
 քերը լույս են տեսնում միլիոնավոր որինակներով

և վայրկենապես ներծծվում են ընթերցող մասսաների մեջ, ինչպես մի դույլ ջուրը անապատի չոր ավազների մեջ: Նրան գիտեն բոլորը: Նա թարգմանված և խորհրդային Միության՝ մի ժամանակ ամենահետամնաց՝ ժողովուրդների լեզուներով: Կատարվել և Պուշկինի այս կանխագուշակությունը:

Յեվ իմ համբավը կանցնի Ռուսիայով մեծ և անծայր
 Յեվ կկոչի ամեն մեկն ինձ իր լեզվով սեփական —
 Թող հպարտ՝ սլավոնի, ֆիննը նաև, դեռ խավար
 Տունդուան անգամ, և՛ դալմուզն՝ ստեպաների բարեկամ:
 (Թարգմ. Վեսպեր)

ՑԱՆԿ

Մանկություն և պատանեկություն	3
Պետերբուրգում	7
Հարավում	11
Միխայլովսկոյեյում	20
Ցարի և ժանդարմների խնամակալության տակ	27
Ուղեվորություն դեպի Կովկաս	32
Մսկվայում և Բուդինոյում	36
Ամուսնությունից հետո	39
Արքունական գերության մեջ	44
Մենամարտը	55
Մահվան մահիճում	61
Թաղումը	63



Պատ. իմբ. Ռուբ. Զարյան
Շապիկը՝ Հովհ. Շավարեի
Սրբազրիչ՝ Ա. Արզախանյան

Հրատ. 3970, Գլավ. լիագ. կ—4487, Պատվ. 1552, Տիրած 8000
Հանձնված է արտադրության 21 դեկտեմբերի, 1936 թ.
Ստորագրված է սպեյու 17 հունվարի, 1937 թ.

Պետհրատի սպարան, Յերեվան, II Կնունյանցի, 4

« Ազգային գրադարան



NL0316799

ԳԻՆԸ 75 Կ.

66

В. Вересаев

Жизнь Пушкина

изд. Арм. ССР, Ереван, 1937